Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

«ԿՌՈՒՆԿ»

ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

«Կ Ռ ՈՒ Ն Կ»

«Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն
Ստեփանակերտ-2013

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.5(2Հ)
Ա 161

Աշխատանքը կատարվել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտում

Տպագրվում է արցախահայության ազգային-ազատագրական պայքարի՝ Ղարաբաղյան շարժման 25-րդ տարեդարձի տոնակատարության կազմակերպման և անցկացման պետական հանձնաժողովի միջոցառումների ծրագրի շրջանակներում

Աբրահամյան Հրանտ
Ա 161 Կռունկ Հրանտ Աբրահամյան.- Ստեփանակերտ:
Վաչագան Բարեպաշտ, 2013.- 64 էջ:

Գիրքը նվիրված է 1988թ. մարտի սկզբին Արցախում ստեղծված «Կռունկ» կոմիտեի գործունեությանը: Չնայած քաղաքական հանգամանքների պարտադրանքով ունեցած կարճատև գոյությանը, «Կռունկ»-ը կարևոր դեր է խաղացել արցախահայության ազգային-ազատագրական պայքարի՝ Ղարաբաղյան շարժման սկզբնական փուլում:

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 325
ԳՄԴ 66.5(2Հ)

ISBN 978-99941-2-823-5
© Աբրահամյան Հրանտ, 2013

Հրանտ Բարսեղի ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ծնվել է 1931թ. օգոստոսի 12-ին՝ Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Քերթ (V դարում՝ Վեհկերտ) գյուղում:

1950թ. ավարտել է հարևան Սոս գյուղի միջնակարգ դպրոցը, 1954-ին՝ Բաքվի Վ.Ի.Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը՝ գերազանցության դիպլոմով:

Ուսումն ավարտելուց հետո աշխատանքի է նշանակվել Ադրբեջանի Ֆիզուլի քաղաքի Կիրովի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության ուսուցիչ:

1954-1956թթ. ծառայել է խորհրդային բանակում:

Աշխատել է ԼՂ Մարտունու շրջանի մի շարք դպրոցներում՝ ուսուցիչ, դպրոցի տնօրեն:

1973թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Լեռնային Ղարաբաղը սոցիալիզմի կառուցման տարիներին» թեմայով, 1997-ին՝ դոկտորական թեզ, «Արցախահայության ազատագրական պայքարը 1917-1923թթ.» թեմայով:

2004թ. ՀՀ ԲՈՀ-ի որոշմամբ շնորհվել է պրոֆեսորի կոչում:

2006-ից աշխատում է ՀԳԱԱ պատմության ինստիտուտում՝ որպես առաջատար գիտաշխատող:

Հեղինակ է 24 գրքի և 120 գիտական հոդվածների: Ուսումնասիրության թեման Արցախի պատմությունն է՝ իր անցյալով և ներկայով: Հայտնի է նրա «Մարտնչող Արցախը 1917-2000թթ.» եռամաս ուսումնասիրությունը:

Նախօրեին

«Կռունկի» երևան գալը ճիշտ ընկալելու համար անհրաժեշտ է պարզաբանել, թե նախօրեին ինչպիսին էր ընդհանուր վիճակն Արցախ-Ղարաբաղում և թե ինչու արցախահայությունը հերթական անգամ՝ 20-րդ դարավերջին ըմբոստացավ ԱդրԽՍՀ-ի կազմում պատմականորեն հայկական երկրամասի հետագա գոյության դեմ:

1988-ին Լեռնային Ղարաբաղում բռնկված ազգային-ազատագրական պայքարի՝ Ղարաբաղյան շարժման, ակունքներն անցյալում են: Այդ պայքարն իր մարտավարական նշանակությամբ, բովանդակությամբ և բնույթով նոր հիմք դրեց նորագույն պատմության մեջ և այդ տեսակետից դարձավ դարակազմիկ: Արցախցիները հենց սկզբից ձգտում էին հայրենի երկրամասը մայր Հայաստանի հետ վերամիավորել սահմանադրական եղանակով, սակայն նրանց ջանքերը հանդիպեցին Մոսկվա-Բաքու դիմադրությանը: Ակնհայտ է, որ 1985թ. սկսված գորբաչովյան վերակառուցման ժամանակաշրջանում ավելի սրվեցին հակասությունները կենտրոնի և ազգային հանրապետությունների միջև: Հենց այդ ժամանակ էլ կրկին ասպարեզ իջավ Արցախ-Ղարաբաղի հիմնահարցը: Ոչ միայն արցախցիները, այլև Խորհրդային Միության մյուս փոքր ազգություններն անկախության էին ձգտում: Օր-օրի ավելի էին խորանում հակասությունները: Միության գոյատևումը դրվեց հարցականի տակ:

Ադրբեջանի իշխանությունները ձգտում էին ունենալ Լեռնային Ղարաբաղ՝ առանց նրա բնիկ հայ բնակչության, որը հազարամյակներ շարունակ ապրել է այդ հողում: Այստեղ խորհրդային վերջին տասնամյակներում Ադրբեջանի իշխանությունների մեղքով ամեն տարի թերակատարվում էին կապիտալ ներդրումների, շինմոնտաժային աշխատանքների, հիմնական արտադրական ֆոնդերի շահագործման պլանային առաջադրանքները: Մարզում Ադրբեջանի կողմից կապիտալ ծախսերը կատարվում էին կամայական ձևով: 1981-1985թթ. մարզը բնակչության 1000 շնչի հաշվով կատարված կապիտալ ներդրումներով ավելի քան 2, իսկ 1986թ.՝ 2.7 անգամ զիջում էր հանրապետության միջին ցուցանիշներին: Եթե 1986թ. Ադրբեջանական ԽՍՀ-ում մեկ շնչի հաշվով կապիտալ ներդրումները կազմում էին են 342ռ., ապա ԼՂԻՄ-ում՝ 181ռ.:[1] Մարզի ամենախոշոր արդյունաբերական ձեռնարկությու-

1. Народное хозяйство Азербайджанской ССР. Юбилейней статистический ежегодник к 70-летию Великого Октября, Баку, 1987, ст. 3, 11, 266

նը՝ Ղարմետաքսկոմբինատը, չուներ ներկման արտադրամաս, արտադրանքը ներկելու համար հումքն առաքվում էր Շաքիի մետաքսագործական միավորում, որտեղ քմահաճորեն մետաքսի որակը ցածր էր գնահատվում, ինչի պատճառով էլ Ղարմետաքսկոմբինատը տարեկան կորցնում էր 60 միլիոն ռուբլի:[2] Մարզը չուներ երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան, չափազանց քիչ էին գյուղատնտեսական մեքենաները: Մարզի 218 բնակավայրերից միայն 25-ն էր շատ թե քիչ ջրով ապահովված, 77 կոլտնտեսություններից և պետական տնտեսություններից հինգն էին գազիֆիկացված: Անշուշտ, խիստ խտրական էր ադրբեջանական իշխանությունների վերաբերմունքը մարզի նկատմամբ: 1981-1985թթ. տարեկան միջին հաշվով մարզում արտադրվել է 145.7 հազար տոննա խաղող, մինչև 11 հազար տոննա միս, շուրջ 55 հազար տոննա կաթ, որը զգալի չափով գերազանցել է 1000 շնչի հաշվով համապատասխան միջին հանրապետական ցուցանիշը: Մարզի 4.4 հազար քառակուսի կիլոմետրի վրա պահվում էին 100 հազար գլուխ խոշոր եղջերավոր մթերատու անասուն, ավելի քան 275 հազար գլուխ ոչխար և այծ, 95 հազար խոզ: Անչափ դժվար էր հայթայթվում անասնակերը, վատ էին ոռոգման աշխատանքները, անմխիթար վիճակում էր գյուղատնտեսական տեխնիկան: Մարզում հետզհետե կրճատվում էր դպրոցների և աշակերտների թիվը: Բավական է նշել, որ միայն 1970-1980-ական թվականներին աշակերտների թիվը կրճատվել էր 13 հազարով, և վաթսունական թվականներից մինչև 1988թ. փակվել են 46 հայկական դպրոցներ: Բժշկական սպասարկման տեսակետից մարզը գտնվում էր Միության ամենավերջին տեղերից մեկում: Ստեփանակերտ քաղաքի մանկապարտեզներում տեղերի քանակը 1575-էր, բայց կար 2735 երեխա: 1986թ. Լեռնային Ղարաբաղում բնակչության 10 հազար շնչին ընկնում էր 28.7, իսկ հանրապետությունում՝ 38.4 բժիշկ:

Մարզում անմխիթար վիճակում էր գտնվում, մանավանդ, բնակարանային շինարարությունը: Ստեփանակերտում մարդիկ ավելի քան 20 տարի հերթի էին սպասում:

Ադրբեջանական իշխանությունները հետապնդում էին մի նպատակ՝ Լեռնային Ղարաբաղը վերածել արոտավայրի: Այդ նպատակով էլ տարեցտարի կրճատվում էին մարզի ցանքատարածքները: Եթե 1960թ. մարզում ամբողջ ցանքատարածքները կազմում էին 82.2 հազար հա, ապա 1986-ին այն իջել էր 57.1 հազարի, մինչդեռ նույն ժամանակաշր-

2.Հ. Աբրահամյան, Ճակատագրին ընդառաջ, Երևան, 2001, էջ 13-15, նույնի՝ Մարտ՝ կրակագծի մատույցներում, Երևան, 2008, էջ 17-18

ջանում կերային մշակաբույսերի տարածքները 24.4 հազար հեկտարից հասել էին 33.8 հազարի:[3]

Արցախցիները խաղողագործությամբ զբաղվել են հազարամյակներ շարունակ: Դա տնտեսության ամենաեկամտաբեր և հեռանկարային ճյուղերից մեկն է: Ադրբեջանի իշխանությունները քայլեր էին ձեռնարկում երկրամասի բարեբեր այգիները վերացնելու, դրանք արոտավայրերի վերածելու ուղղությամբ: Այլապես ինչպե՞ս հասկանալ, երբ պլանավորվել էր միայն մարզում ոչխարների թիվը հասցնել 500 հազարի:

Ամենացավալին մարզի հայ բնակչության ժողովրդագրական վիճակն էր: ԱդրԽՍՀ ղեկավարությունը մշտապես ձգտել է բոլոր հնարավոր ձևերով նվազեցնել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության թվաքանակը: Դրա համար Ադրբեջանը գործի է դրել հանրապետության վարչական ռեսուրսները: ԱդրԽՍՀ-ում հայերին նեղելու քաղաքականության լավագույն վկայություն կարող է հանդիսանալ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի նախկին առաջին քարտուղար, հետագայում՝ Ադրբեջանի նախագահ, հանգուցյալ Հեյդար Ալիևի խոստովանությունը: Ահա թե ինչ է նա ասել Բաքվի «Զերկալո» թերթին տված իր հարցազրույցում. «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը ծագել է 1988 թվականին: Դա նոր հիմնախնդիր չէ: Այսինքն՝ դա սուր հիմնախնդիր է: Բայց այդ հիմնախնդիրը շարունակվում է 20-րդ դարասկզբից: Ես մի քանի անգամ ասել եմ այդ մասին: Եվ անցյալում, երբ ես աշխատում էի անվտանգության մարմիններում, իրավիճակը նորմալ չէր Լեռնային Ղարաբաղում: Այն նորմալ չէր նաև խորհրդային շրջանում... Երբ ես առաջին քարտուղար էի, այն ժամանակ շատ եմ օգնել Լեռնային Ղարաբաղի զարգացմանը: Միևնույն ժամանակ ջանացել եմ այնտեղ փոխել ժողովրդագրությունը: Լեռնային Ղարաբաղն այնտեղ ինստիտուտ՝ բուհ բացելու հարց էր բարձրացրել: Մեզ մոտ բոլորն էլ առարկում էին դրա դեմ: Ես մտածեցի՝ որոշեցի բացել: Բայց այն պայմանով, որպեսզի լինի երեք բաժանմունք՝ ադրբեջանական, ռուսական և հայկական: Բացեցինք: Ադրբեջանցիներին հարակից շրջաններից ուղարկեցինք ոչ թե Բաքու, այլ այնտեղ: Այնտեղ բացեցինք կոշկի մեծ ֆաբրիկա: Բուն Ստեփանակերտում աշխատուժ չկար: Մարզի շրջակա վայրերից ադրբեջանցիներ ուղարկեցինք այնտեղ: Այդ և այլ միջոցներով ես ջանացել եմ, որպեսզի Լեռնային Ղարաբաղում ավելի շատ ադրբեջանցիներ լի-

3. Նշված տվյալները տես՝ Հ. Աբրահամյան, Ճակատագրին ընդառաջ, էջ 13-15, նույնի՝ Մարտ՝ կրակագծի մատույցներում, էջ 17-18

նեն, իսկ հայերի թիվը կրճատվի: Նրանք, ովքեր այն ժամանակ աշխատել են Լեռնային Ղարաբաղում, գիտեն այդ մասին: Համենայն դեպս, ի շնորհիվ իմ կամքի, այլ հատկանիշների՝ խոսքս օրենք էր նրա ղեկավարության համար»:[4]

ԱդրԽՍՀ տարբեր ժամանակների ղեկավարության վարած նման քաղաքականության հետևանքով է, որ 1959-1979թթ., այսինքն՝ 20 տարում, հայ բնակչությունն ավելացել էր ընդամենը 13 հազար մարդով: 1979թ. մարդահամարով 1970-1979թթ. մարզում ադրբեջանցիներն ավելացել էին 37, իսկ հայերը՝ 1.7 տոկոսով: Կամ՝ ուրիշ օրինակ. 1913թ. Լեռնային Ղարաբաղում ապրում էր 176 հազար մարդ, 1926-ին թիվն իջավ՝ 125.3: 1939թ. մարդահամարի տվյալներով, մարզում հայերի թիվն ավելացել էր 18.9 տոկոսով, այսինքն՝ 1926թ. մարզում եղած 111.7 հազար հայերի քանակը հասել էր 132.8-ի: Այդ նույն թվականին մարզի ընդհանուր բնակչության թիվը հասել էր 159.8 հազարի, կամ ընդհանուր աճը կազմել էր 20.4 տոկոս: 1979թ. մարզի գյուղական բնակչության թիվը պակասել էր 61.3 հազարով: [5]

Խորհրդային իշխանության տարիներին մարզի բնակչության վերաբերյալ հստակ պատկերացում է տալիս հետևյալ աղյուսակը (արտահայտված հազարներով):[6]

	1926	1939	1959	1970	1979	1989
Ամբողջ բնակչությունը	125.3	150.8	130.4	150.3	162.3	189.1
այդ թվում հայեր	111.2	132.8	110.1	121.1	123.1	145.5
%-ներով	89.1	88.1	84.1	80.6	75.9	76.9
ադրբեջանցիներ	12.6	14.1	18.0	27.2	37.3	40.6
%-ներով	10.1	9.3	13.0	18.1	22.9	21.5
ռուսներ	0.6	3.2	1.8	1.3	1.3	1.9
%-ներով	0.5	2.1	1.4	0.9	0.8	1.0

Բերված տվյալները համոզում են, որ արցախահայության ազգային-ազատագրական պայքարի նախօրյակին Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի իշխանություններն անթաքույց և նենգամտորեն իրագործում էին հայակործան քաղաքականություն: Ադրբեջանի իշխանու-

---

4. Иван Ратцигер: Азербайджан и анти-армянский антифашизм http://regnum.ru/news/ 1229002.html 15.07.2010

5. Խոջաբեկյան Վ. Ե., Արցախը փորձության ժամին, Երևան, 1991, էջ 66-68

6. Հ. Աբրահամյան, Մարտ՝ կրակագծի մատույցներում, էջ 19

թյունները բոլոր օղակներում կոպտորեն խախտում էին ինքնավար մարզի իրավունքները: Մարզը չուներ հայերեն լեզվով հրատարակչություն, զրկված էր Հայաստանից մայրենի լեզվով հեռուստահաղորդումներ դիտելու և հայերեն ռադիոհաղորդումներ լսելու հնարավորությունից: Ադրբեջանն ուներ հստակ նպատակ՝ ունենալ ադրբեջանականացված (թուրքացված) Արցախ: Եվ պատահական չէ Արկադի Վոլսկու դիտարկումը. «Հիշենք թեկուզ, թե ինչպես է ծագել ու զարգացել Ղարաբաղյան շարժումը: Ինչո՞ւ մարդիկ անվերապահորեն Հայաստանին միանալու հարց դրեցին: Որովհետև տեսնում էին, թե ինչպես է Ադրբեջանի ղեկավարությունը մարզը հետզհետե փակուղի մտցնում, ձգտում խլել հայ բնակչության բնական կապը Հայաստանի հետ մշակույթի ու լեզվի ոլորտներում և որոշակի խոչընդոտներ հարուցում հայալեզու մտավորականության դեմ: Այդ բոլորն իրականություն է: Այդ ամենը՝ ճշմարտություն: Իմ ուղևորությունների ժամանակ երկրամասում ոչ մի տեղ չեմ հանդիպել մարդկանց ճակատագրի հանդեպ այնպիսի բարձիթողության ու արհամարհանքի, ինչպիսին Լեռնային Ղարաբաղում է»:[7]

7. *«Правда», 15.01.1989*

Պայքարը նոր շունչ ու թափ է առնում

1986-1987 թվականներին արցախահայությունը ձեռնամուխ եղավ Լեռնային Ղարաբաղը մայր Հայաստանի հետ վերամիավորելու համար ստորագրահավաքին: Հավաքվել էր 75-80 հազար ստորագրություն: 1987-ի նոյեմբերի վերջերին արցախահայության առաջին պատվիրակությունը[8] Մոսկվա մեկնեց՝ տանելով հավաքված ստորագրությունների փաթեթը: Դեկտեմբերի 1-ին պատվիրակությանն ընդունեց ԽՄԿԿ Կենտկոմի ընդունարանի վարիչ Ա. Կրիգինը:[9]

Սակայն հանձնված ստորագրությունների փաթեթը գնաց արխիվ:

Արցախցիները ստիպված էին 1988-ի հունվարի սկզբին Մոսկվա ուղարկել նոր պատվիրակություն՝ արցախահայության բողոքը վերադաս մարմիններ ներկայացնելու համար: Պատվիրակությունը բաղկացած էր 13 հոգուց: Նրա կազմի վերաբերյալ հրապարակված նյութերում միասնականություն չկա: Ըստ Յուրի Գրիգորյանի կազմած ցուցակի, պատվիրակության մեջ էին Արկադի Կարապետյանը, Սերժ Առուշանյանը և Քրիստափոր Խաչատրյանը (Ստեփանակերտ), Սլավա Առուշանյանը և Ռաֆիկ Ասրյանը (Ասկերան), Գուրգեն Շահրամանյանը և Գևորգ Սաղյանը (Մարտունի), Ռոբերտ Բալայանը (Տող), Ջամիլ Մարտիրոսյանը (Նորագյուղ), Յուրի Գրիգորյանը (Գիշի) և Արմո Առստամյանը («Ազատ Արցախ», 24.01.2013), իսկ Ջամիլ Մարտիրոսյանի ներկայացրած ցուցակում Իգոր Մուրադյանի փոխարեն նշված է Ռաֆիկ Ասրյան (Ասկերան) («ԼՂ Հանրապետություն, 31.01.1998): Պատվիրակությանն ընդունեց ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամության թեկնածու Պ. Ն. Դեմիչևը և ԽՄԿԿ Կենտկոմի ազգամիջյան հարաբերությունների ենթաբաժնի վարիչ Վ. Ա. Միխայլովը: Այս վերջինը խոստացավ հարցն ուսումնասիրել և զեկուցել Կենտկոմի բարձր ատյաններին: Պատվիրակությունը Լեռնային Ղարաբաղ վերադարձավ հունվարի 13-ին: Բաքվի պահանջով պատվիրակության անդամներին հերթով կանչում էին համապատասխան մարմիններ և «զրույցներ» ունենում նրանց հետ:

---

8. Պատվիրակությունը բաղկացած էր 6 հոգուց՝ Վլադիմիր Խաչատրյան (Մարտունի), Սաղաթել Պետրոսյան (Սոս), Էմիլ Աբրահամյան (Հադրութ), Ռաֆիկ Ասրյան (Ասկերան), Կամո Սաֆարյան (Ճարտար) և Ներսես Դանիելյան («ԼՂ Հանրապետություն», 31.01.1998):

9. «Միացում», N 5, օգոստոս, 1989

Հունվարի կեսերին[10] Ասկերանի շրջանի Նորագյուղ գյուղում տեղի ունեցավ գաղտնի ժողով, որին մասնակցում էին շրջանի կոլտնտեսությունների և գյուղական խորհուրդների 40 նախագահներ և այլ պաշտոնյաներ, Շարժման ակտիվիստներ: Օրակարգում ստորագրահավաքի կազմակերպմանն առնչվող խնդիրներ էին. գործընթացի իրականացման մեթոդոլոգիան, ընդգրկման շրջանակները, ողջ ժողովրդին ոտքի հանելու անհրաժեշտությունը: Ժողովին ներկա էին նաև Իգոր Մուրադյանն ու Վաչե Սարուխանյանը: Իգոր Մուրադյանը հավաքի մասնակիցների ուշադրությանը ներկայացրեց Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ հետ վերամիավորելու մասին իր կազմած Հռչակագիրը: Փաստաթուղթը, որի ռուսերեն բնօրինակի պատճենն իր անձնական արխիվից մեզ սիրով տրամադրել է Սլավա Առուշանյանը, թարգմանաբար մեջբերում ենք ամբողջությամբ.

«Հ Ռ Չ Ա Կ Ա Գ Ի Ր
Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ հետ վերամիավորելու մասին

Արդեն յոթ տասնամյակ է, ինչ Լեռնային Ղարաբաղը՝ պատմական Հայաստանի նահանգներից մեկը, հակառակ լենինյան ազգային քաղաքականության սկզբունքների և հայ ու ադրբեջանական ժողովուրդների շահերի, գտնվում է Ադրբեջանական ԽՍՀ կազմում: Մարզի հայ բնակչությունը, որը նշանակալի դեր է խաղացել հայոց պատմության մեջ, ողջ հայ ժողովրդի՝ դեպի Ռուսաստան կողմնորոշման կայացման գործում, Ռուսաստանի պետության հուսալի պատվար հանդիսացել Արևելքում, ակտիվ մասնակցություն ունեցել հեղափոխական շարժմանը և խորհրդային հայրենիքի պաշտպանությանը, մնացել է տարանջատված Խորհրդային Հայաստանից՝ ոչ միայն քաղաքական, այլև սոցիալ-տնտեսական առումներով:

Չնայած սոցիալիստական շինարարության մեջ ձեռք բերած որոշակի հաջողություններին, որոնք հնարավոր են դարձել ԽՄԿԿ և խորհրդային կառավարության հոգատարության շնորհիվ, Ադրբեջանական ԽՍՀ կազմում Լեռնային Ղարաբաղի գտնվելու ողջ ժամանա-

10. Նորագյուղի գաղտնի ժողովի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Իգոր Մուրադյանը («Հայոց աշխարհ», 24.01.1998) և Կոմիտաս Դանիելյանը («Արցախը չսանձած նժույգ», Երևան, 2001, էջ 38) նշում են, որ այն տեղի է ունեցել հունվարի կեսերին, իսկ Սվետլանա Խաչատրյանը («Ազատ Արցախ», 02.07.2013) և Սլավիկ Առուշանյանը 2013թ. մարտի 17-ին ինձ հետ ունեցած հեռախոսազրույցի ժամանակ նշում են փետրվարի 1-ը: Մենք հակված ենք առաջին տեսակետին:

կաշրջանը բնութագրվում է որպես իսկական ազգային աղետ մարզի հայ բնակչության համար: Կասեցվել է մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը, ստեղծվել են կյանքի անտանելի պայմաններ, ավերվել են հայկական մշակույթի հուշարձանները և տեղի է ունեցել պատմության անօրինակ խեղաթյուրում:

Այս ամենը հանգեցրել է երկրամասի հայ և ռուս բնակչության թվի բացարձակ և հարաբերական կրճատմանը: Դրա հետ մեկտեղ՝ Լեռնային Ղարաբաղը, առանց որևէ տնտեսական անհրաժեշտության, մշտապես բնակեցվում է ադրբեջանական բնակչությամբ:

Լեռնային Ղարաբաղի քաղաքական և ազգային իրավիճակն աննախադեպ է խորհրդային իրականության մեջ: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը միակ ազգային-ինքնավար կազմավորումն է մի ազգի, որը միութենական հանրապետություն ունի և կրում է ոչ թե ազգային, այլ աշխարհագրական անվանում: Հայկական ԽՍՀ-ին մերձ գտնվող Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը գրեթե տնտեսական և մշակութային կապեր չունի նրա հետ: Տվյալ ինքնավարության մեջ չեն մտել Լեռնային Ղարաբաղ պատմական նահանգի անքակտելի մաս հանդիսացող Շահումյանի շրջանը և Խանլարի շրջանի հարավային հատվածը:

Ադրբեջանական ԽՍՀ կազմում Լեռնային Ղարաբաղի հետագա գտնվելն անխուսափելիորեն հանգեցնելու է հայ ժողովրդի դուրսմղմանն իր հազարամյա օրրանից, ինչպես դա եղել է մեկ այլ հայկական նահանգի՝ Նախիջևանի, հետ: Նրանք, ովքեր պանթյուրքիզմի և պանիսլամիզմի քաղաքականություն են վարում մեր երկրում, նպատակ ունեն ստեղծել Թուրքիայի սահմանից մինչև Կասպիական ծգվող միաձույլ տարածք, որտեղ կբացակայի կամ նվազագույնի կհասցվի ոչ ադրբեջանական բնակչությունը:

Չնայած Խորհրդային Հայաստանից իր անջատվածությանը՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը միասնական հայկական սոցիալիստական ազգի բաղկացուցիչ մասն է հանդիսանում և պետք է ապրի ու զարգանա Հայկական ԽՍՀ հետ ոչ միայն մշակութային-ազգային, այլև սոցիալ-տնտեսական միասնության մեջ: Լեռնային Ղարաբաղի ցանկացած այլ ազգային-քաղաքական վիճակ հակալենինյան է և հակասահմանադրական:

Անհրաժեշտ է նշել, որ բոլոր յոթ տասնամյակներին էլ անշեղ ու աներեր է Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության՝ հայրենի երկրամասը Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու ցանկությունը: Ժողովրդավարության զարգացման ամեն մի նոր փուլում մարզի հայ

բնակչությունը հույս է ունեցել, որ արդարացի լուծում կստանա հարցը: Դրա վկայություն են ԽՄԿԿ ԿԿ-ին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդին ուղղված Դիմումների տակ դրված տասնյակ հազարավոր ստորագրությունները և Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու մասին խնդրանք պարունակող հազարավոր նամակները: Տվյալ հարցի արդարացի, իսկը լենինյան լուծումը հարկավոր է ոչ միայն հայ և ադրբեջանական ժողովուրդներին, քանզի այդպիսով կհաղթահարվի փոխադարձ անվստահությունն ու կասկածամտությունը, այլև, առաջին հերթին, կհամապատասխանի Խորհրդային Միության շահերին ընդհանուր առմամբ: Խորհրդային Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը թույլ կտա ամրապնդել ԽՍՀՄ հարավային սահմանների պաշտպանունակությունը, կբարձրացնի մեր երկրի հեղինակությունը կոմունիստական և բանվորական կուսակցությունների շրջանում, արտասահմանի հայկական համայնքներին էլ ավելի կհամախմբի խորհրդային հայրենիքի շուրջը:

Մենք՝ Լեռնային Ղարաբաղի բնակիչներս, սույն Հռչակագրով լիազորված լինելով մեր ժողովրդի կողմից, հռչակում ենք մեր հայրենի երկրամասի, ներառյալ՝ Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու, Շուշիի, Հադրութի, Շահումյանի, Խանլարի շրջանների, վերամիավորումը Հայկական ԽՍՀ հետ և ԽՄԿԿ ԿԿ-ին ու ԽՍՀՄ Գերագույն խորհրդին խնդրում ենք հաստատել այս որոշումը»:

Քննարկելով այն, ժողովը միաձայն ընդունեց համապատասխան որոշում, որում ասվում է. «Լսելով և քննարկելով Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու մասին Հռչակագիրը, ժողովը որոշում է՝

1. հավանություն տալ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու մասին Հռչակագրին,

2. խնդրել ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկ. Մ. Ս. Գորբաչովին՝ արագացնել Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորման հարցի ուսումնասիրումը և լուծումը,

3. հավաստիացնել ԽՄԿԿ Կենտկոմին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդին, որ դա բխում է մեր երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու և ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամությունն ամրապնդելու շահերից»:[11]

Նորագյուղի ժողովը կարևոր դեր է խաղացել արցախահայության ազգային-ազատագրական պայքարն առաջ մղելու գործում: Այդ ժողո-

11. «Ազատ Արցախ», 7 փետրվարի, 2013

վում հստակեցվեց, որ Ղարաբաղը պատրաստ է կազմակերպված ելույթի: Դա խթանեց պայքարի հետագա ծավալումը:

Վարդան Հակոբյանի վկայությամբ, այդտեղ՝ Նորագյուղի ժողովում Վաչե Սարուխանյանի կողմից առաջին անգամ հրապարակվեց Արցախի մտավորականների նամակը՝ ուղղված ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյին, Կենտկոմի գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովին: Նամակը, որ դեռևս 1987թ. վերջին ամիսներին պատրաստել էին այն ժամանակ Ադրբեջանի գրողների միության ԼՂ մարզային բաժանմունքի քարտուղար, ԼՂԻՄ կուսմարզկոմի անդամ, մարզխորհրդի պատգամավոր Վարդան Հակոբյանը և «Սովետական Ղարաբաղ» մարզային թերթի բաժնի վարիչ, բանաստեղծ Հրաչյա Բեգլարյանը և որը ստորագրել էր 18 մտավորական, Մոսկվա՝ երկրի բարձրագույն ատյաններ ուղարկվեց 1988թ. հունվարի վերջերին: Մտավորականության նամակը, փաստորեն, հավաստեց, որ մարզի ղեկավարությունը (բացառությամբ Բ. Կևորկովի ու մի քանի հոգու) և ժողովուրդը բարձրացված հիմնախնդիրների կապակցությամբ միասնական են ու միաձայն: Մարզը, նշվում է նամակում, թե՛ տնտեսապես և թե՛ մշակութային առումով կտրված է ազգային արմատներից, հայ մտավորականների համար Լեռնային Ղարաբաղում ստեղծվում են այնպիսի պայմաններ, որոնց պարագայում նրանք ստիպված են լինում հեռանալ ծննդավայրից: Ի դեպ, նամակը ռուսերեն թարգմանելու ժամանակ հեղինակների կողմից անդրադարձ կատարվեց նաև այդ օրերին Բաքվում Ձ. Բունիաթովի հեղինակած մի հակահայկական հոդվածի, մասնավորապես, շեշտվում է, որ Ադրբեջանի գիտական շրջանակների կողմից՝ հանրապետության իշխանությունների անմիջական թողտվությամբ, հետևողականորեն, նպատակասլաց և, բնականաբար, անպատիժ խեղաթյուրվում և ադրբեջանականացվում է Լեռնային Ղարաբաղի՝ որպես պատմականորեն էթնիկ հայկական տարածքի, բազմադարյա պատմությունը: Նամակի հեղինակները գտնում են, որ փրկության միակ ելքը պատմական Հայաստանի ավանդական մի մասը կազմող Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Խորհրդային Հայաստանին միացնելն է:[12] «Կրեմլին ուղղված մեր նամակով,- նշում է Վարդան Հակոբյանը,- Շարժումը, կարելի է ասել, լրիվ դուրս եկավ ընդհատակից: Արդեն ամբողջ աշխարհն էր խոսում ղարաբաղյան հիմնախնդրի մասին՝ ռադիո-հեռուստատեսության բոլոր ալիքներով, մամուլում»:

---

12. Հրաչյա Բեգլարյան, Արցախ-Նամե, գիրք երրորդ, Ստեփանակերտ, 2006, էջ 19-24, «Եղիցի լույս» թերթ, 2013թ., փետրվար-մարտ, թիվ 02-03

1988-ի փետրվարի սկզբին Վարդան Հակոբյանի գլխավորությամբ Մոսկվա մեկնեց ԼՂԻՄ մտավորականության պատվիրակությունը[13], որը մոտ տասն օր գտնվելով այնտեղ, բազմաթիվ հանդիպումներ ունեցավ բարձրաստիճան մի շարք ղեկավարների հետ: Հայկական ԽՍՀ պետական անվտանգության կոմիտեի նախագահի մի զեկուցագրից երևում է, որ Արցախի պատվիրակությանը Մոսկվայում «հասկացրել են, որ պետք է, նախ, դիմել մարզային խորհրդին ու կարողանալ որոշում ընդունել տալ ԼՂԻՄ-ը Հայաստանին միավորելու մասին և այն ուղարկել ըստ ատյանների…»:[14] Այդ փաստաթղթից կարելի է ենթադրել, որ Մոսկվան նույնպես արցախցիներին հուշել է հրավիրել ԼՂԻՄ մարզխորհրդի նստաշրջան և որոշում ընդունել մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմից դուրս բերելու ու Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու մասին: Պատվիրակության անդամ Գուրգեն Գաբրիելյանը հետո կասի. «Լավ է՝ մեր ժողովուրդը շուտ սթափվեց և ցույցերից հետո բռնեց բացահայտ զինված պայքարի ուղին: Եվ հաղթեց»:[15] Իսկ պատվիրակության մեկ այլ անդամ՝ Ժաննա Գալստյանը, նշեց, որ «Մեր՝ մտավորականներիս, Մոսկվա կատարած առաքելությունը ես որակում եմ որպես ուժանակ մեծ պայթյունի համար, որ տեղի ունեցավ նրան հաջորդող տարիներին»:[16]

Արցախի մտավորականության պատվիրակությունը Ստեփանակերտ վերադարձավ փետրվարի 17-ին: Երևանի Զվարթնոց օդանավակայանում պատվիրակությանը դիմավորեց հայրենասեր մտավորականների մի հոծ խումբ՝ Իգոր Մուրադյանի գլխավորությամբ: Օդանավակայանում տեղի ունեցած հանրահավաքում պատվիրակության անդամներ՝ դերասան Վաչե Սարուխանյանը և գրող Գուրգեն Գաբրիելյանը, պատմեցին մոսկովյան հանդիպումների մասին, կոչ արեցին միավորել բոլոր ուժերը և հասնել խնդրի դրական լուծմանը:[17]

Երբ պատվիրակությունը Ստեփանակերտ վերադարձավ, քաղաքն ասես կաթսայի մեջ եռում էր: Լենինի անվան հրապարակում նրան

---

13. Պատվիրակության կազմը. գրողներ Վարդան Հակոբյան (ղեկավար), Հրաչյա Բեգլարյան, Գուրգեն Գաբրիելյան, դերասաններ Ժաննա Գալստյան, Բենիկ Օվչյան, Վաչե Սարուխանյան (Երևանից, ծննդով Արցախի Մաճկալաշեն գյուղից), երաժիշտ, կոմպոզիտոր Էդուարդ Ղազարյան, քանդակագործ Արմեն Հակոբյան, սոցիալիստական աշխատանքի հերոս Գոհարիկ Սարինյան

14. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ.1, ց.87, գ.11, թ.83

15. «ԼՂ Հանրապետություն», 23.07.1996

16. ՀԱԱ, ֆ.1, ց.87, գ.11, թ.25

17. «ԼՂ Հանրապետություն», 23.07.1996

սպասում էր մի քանի տասնյակ հազար մարդ: Պատվիրակությունը հանրահավաքի մասնակիցներին հաշվետվություն տվեց Մոսկվայում կատարած իր աշխատանքների մասին և կոչ արեց լինել անհողդողդ ու ոչ մի րոպե չնահանջել պայքարից:

Արցախում ազգային-ազատագրական պայքարը նոր շունչ ու թափ էր առնում: Սակայն խորհրդային իշխանության մարզային մարմիններ-ը շարունակում էին վարել ադրբեջանամետ քաղաքականություն և ոչ մի քայլ չէին ձեռնարկում հայրենի երկրամասն այդ վիճակից դուրս բերելու համար: Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի նախկին տնօրեն Բորիս Առուշանյանը պատմում է, որ դեռևս փետրվարի 8-ին իրենց գործարանում կազմակերպվել է ժողով, որտեղ Արցախը Հայաստանի հետ վերամիավորվելու վերաբերյալ ընդունվել է որոշում, որը մեծ իրարանցում է առաջացրել մարզի ղեկավարության շրջանում: Փետրվարի 10-ին նմանատիպ ժողովներ են կազմակերպվել նաև քաղաքի մի շարք այլ հիմնարկ-ձեռնարկություններում:[18]

Փետրվարի 11-ին մարզկոմի առաջին քարտուղար Բորիս Կևորկովը կուսակցության մարզկոմի ապարատի աշխատողներին հաղորդում է Ադրկոմկուսի Կենտկոմի տեսակետն առ այն, թե ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու հարցը չի քննարկվում ու չի քննարկվի ԽՄԿԿ Կենտկոմում, իսկ երկրամասի աշխատավորության ներկայացուցիչներին ԽՄԿԿ Կենտկոմում ոչ-ոք չի ընդունել ու չի էլ ընդունի: Այդ նույն օրն էլ Ստեփանակերտ է ժամանում Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Վ. Կոնովալովը, որպեսզի կանխի ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորմանն ուղղված շարժումը: Նրան ուղեկցում էին Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի վարչական մարմինների բաժնի վարիչ Մ. Ասադովը, Ադրբեջանի պետանվտանգության կոմիտեի նախագահի տեղակալ Ն. Իմրանովը, Ադրբեջանի ներքին գործերի նախարարի, գլխավոր դատախազի, գերագույն դատարանի նախագահի տեղակալները և նրանց անվտանգությունն ապահովող իրավապահ մարմիններ-ի աշխատակիցների խումբը: Նախատեսված էր փետրվարի 12-ին մարզում անցկացնել կուսակցական-տնտեսական ակտիվի ժողովներ, որտեղ հավաքների մասնակիցները պետք է դատապարտեին արցախահայության ազգային-ազատագրական շարժումը: Սակայն՝ իզուր: Հավաքների ժամանակ ելույթ ունեցողները մերկացրին Ադրբեջանի ղեկավարության հակահայ քաղաքականությունը և պահանջեցին մարզը վերամիավորել Հայաստանի հետ: Մասնավորապես, ելույթ ու-

18. «Ազատ Արցախ», 18.02.2002

նենալով Ստեփանակերտի կուսակցական-տնտեսական ակտիվի ժողովում ու դիմելով Բորիս Կևորկովին, Շարժման ակտիվ գործիչ Ռազմիկ Պետրոսյանը հայտարարեց. «Դու վաղուց արդեն չես տիրապետում մարզի իրավիճակին, տեղյակ չես ժողովրդական հուզումներին, կուսմարզկոմի անդամ Վարդան Հակոբյանի գլխավորած պատվիրակությունը Ղարաբաղի հարցով այժմ Մոսկվայում է գտնվում, իսկ դու այդ մասին գաղափար անգամ չունես»:

Եվ «ամենակարող» Կևորկովը զարմացած էր՝ ինչպե՞ս, ո՞նց... Այդքանից հետո նա սկսեց հոխորտալ ու սպառնալիքների տարափ տեղալ ներկաների գլխին, փորձելով համոզել, որ այս ամենն ապարդյուն է, ոչինչ էլ չի լինի...

Այսպիսով՝ Ադրբեջանի իշխանությունների նպատակները ձախողվեցին: Մարզի հայ բնակչությունը դիմեց հանրահավաքների, ցույցերի և փողոցային երթերի: Այդ օրերից էլ մարզի հայ բնակչության պայքարը դարձավ զանգվածային:

Ստեղծված իրավիճակին ծանոթանալու և սկսված շարժումը ճնշելու նպատակով շտապ Ստեփանակերտ ժամանեցին Ադրկոմկուսի Կենտկոմի քարտուղարներ Թ. Խ. Օրուջևը և Ռ. Է. Մեհթիևը:

Օդը շիկանում է

1988թ. փետրվարի երկրորդ տասնօրյակի սկզբից երկրամասում հուզումները նոր թափ են առնում: Մարզի շրջաններում տեղի են ունենում խորհրդակցություններ և այլ հավաքներ, որոնցում հիմնականում քննարկվում են ղարաբաղյան հիմնախնդրին առնչվող հարցեր: Մասնավորապես, Հադրութ և Մարտունի շրջկենտրոններում տեղի ունեցան կուսակցական-տնտեսական աշխատողների խորհրդակցություններ, ապա և՝ փետրվարի 12-ին, այդ շրջանների բնակչության՝ ինքնավար մարզում առաջին զանգվածային ցույցերը, որոնցում առաջ է քաշվում մարզը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու պահանջը:

Հաջորդ օրը՝ փետրվարի 13-ին, ժամը 11-ին Ստեփանակերտի Լենինի անվան հրապարակում սկսվում է մարզկենտրոնի աշխատավորների բազմահազարանոց հանրահավաքը[19], որի մասնակիցները պահանջեցին մարզը վերամիավորել Հայկական ԽՍՀ-ին: Այդ նույն օրը կուսակցության մարզկոմում տեղի ունեցավ մարզկենտրոնի հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարների, սկզբնական կուսակցական կազմակերպությունների քարտուղարների և արհմիութենական կոմիտեների նախագահների հանդիպում, որոնց վրա ճնշում գործադրվեց և փորձ արվեց պարտադրել, որպեսզի մարզի բնակչությանը համոզեն հրաժարվել երկրամասը Հայաստանի հետ վերամիավորելու պահանջից: Ինչպես սպասվում էր՝ հրավիրվածները հրաժարվեցին կատարել իշխանությունների պահանջը:[20]

Ադրբեջանի ղեկավարությունը, տեղեկանալով, որ մարզում օրակարգի հարց է դարձել ԼՂԻՄ մարզխորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու խնդիրը, ձեռնամուխ եղավ բացահայտ շանտաժի: Փետրվարի 14-ին Ստեփանակերտ տեղափոխվեց 12 միավորից բաղկացած տանկային մի շարասյուն: Քաղաքի փողոցները լցվեցին խորհրդային զինվորներով: Արցախ էին տեղափոխվել հանրապետական միլիցիայի ազգությամբ ադրբեջանցի մեծ թվով աշխատակիցներ:

Փետրվարյան այդ օրերին ստեղծվում է նախաձեռնող խումբ, որը ղեկավարում էր Արկադի Մանուչարովը: Շարժման շտաբը, որը մինչ այդ գտնվում էր ԼՂ գրողների միությունում, տեղափոխվում է «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագրատուն: Թերթի գրականության և

19.Հանրահավաքին մասնակցել է շուրջ 7000 մարդ, չնայած կենտրոնական հեռուստաալիքն օգտագործել է 500 թիվը:

20. «Միացում», թ.5, 27.12.1989

արվեստի բաժնի վարիչ, բանաստեղծ Գուրգեն Գաբրիելյանի աշխատասենյակ: Ձուտ գործնական առումով այն նպատակահարմար էր, քանի որ աշխատասենյակի պատուհաններն ուղիղ նայում էին Լենինի անվան հրապարակին: Այդտեղից համակարգվում էին հրապարակում տեղի ունեցող հանրահավաքները: Ստեփանակերտում հավաքվել էր մարզի բնակչության զգալի մասը, որը միահամուռ պահանջում էր երկրամասը միավորել Հայաստանի հետ: Համանման հանրահավաքներ տեղի էին ունենում նաև մարզի շրջկենտրոններում: Բացի այդ, օրական հարյուրավոր նամակ-հեռագրեր էին ուղարկվում Մոսկվա և Երևան, որոնց հեղինակները պահանջում էին արդարացիորեն լուծել Արցախի հիմնահարցը: Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պրոֆեսորա-դասախոսական կազմի 28 հոգու ստորագրությամբ Մ. Գորբաչովին ուղարկված հեռագրում հեղինակները պահանջում էին. «Ղարաբաղի քաղաքական հարցը ճիշտ որոշելու համար ստեղծել կառավարական հանձնաժողով»:[21]

Բաքվից և Մոսկվայից ամեն օր ժամանում էին նոր էմիսարներ: Շտապ Ստեփանակերտ է տեղափոխվում ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի մի դիվիզիա՝ գեներալ Վ. Սաֆոնովի հրամանատարությամբ: Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի վարչական մարմինների բաժնի վարիչ Մահմուդ Ասադովը, որն այդ օրերին գտնվում էր Ստեփանակերտում, ելույթ ունենալով կուսմարզկոմի բյուրոյի փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը կայացած նիստում, չզլացավ սպառնալիքներ տեղալ «ծայրահեղականների և անջատողականների» հասցեին: Իր ելույթում նա, մասնավորապես, ցինիկաբար հայտարարեց, որ հարևան շրջաններից 100 հազար ադրբեջանցիներ պատրաստ են ցանկացած պահի ներխուժել Ղարաբաղ և «արյունալի սպանդ» իրագործել այդտեղ: Այն կուսակցության ներկայացուցիչը, որի հիմնական գաղափարախոսությունը համարվում էր «պրոլետարական ինտերնացիոնալիզմը», չթաքցրեց նաև այդ քաղաքականության նպատակը. «Մենք Ղարաբաղը կվերածենք հայկական գերեզմանոցի»:[22]

---

21. «Սովետական Ղարաբաղ», 02.03.1988

22. «Հայաստանի Հանրապետություն», N 31, 20.02.2009, Иван Ратцигер: Азербайджан и анти-армянский антифашизм, http://regnum.ru/news/1229002.html 15.07.2010

Նախաձեռնող խումբը

1988-ի փետրվարին նոր թափ առած Ղարաբաղյան շարժումը նոր պահանջներ էր առաջադրում. պետք էր ստեղծել իրադարձությունների հետագա ընթացքը կանոնավորող ժողովրդական մի մարմին, որն իր վրա վերցներ այդ ամենի պատասխանատվությունը: Նման կազմակերպություն ունենալը դարձել էր հրամայական: Այդ մասին Երևանից հիշեցնում էր նաև Իգոր Մուրադյանը, որն օրական մի քանի անգամ զանգահարում էր Ստեփանակերտ: Շարժման ակտիվիստները՝ Արկադի Մանուչարովը, Վարդան Հակոբյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչյա Բեգլարյանը, Մաքսիմ Հովհաննիսյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Ռոլես Աղաջանյանը, Բենիկ Օվչյանը, Ժաննա Գալստյանը, Էդվարդ Ղուկասյանը, Համլետ Գրիգորյանը, Արմո Ծատուրյանը, Էռնեստ Հայրապետյանը, Պավել Նաջարյանը, Վալերի Մարությանը, Արմեն Հակոբյանը, Էդվարդ Ղազարովը, Ռուդիկ Աթայանը, Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը, Մաքսիմ Միրզոյանը, Գեորգի Պետրոսյանը, Յուրի Ձհանգիրյանը, Մուրադ Պետրոսյանը, Արսեն Լաչինյանը, Բորիս Առուշանյանը, Սերգեյ Խաչատրյանը և շատ ուրիշներ զօր ու գիշեր հանգիստ չունեին: Հենց նրանց մտահղացմամբ էլ ծնվեց նախաձեռնող խումբ ստեղծելու գաղափարը: Նախաձեռնող խմբից առավել ակտիվ էին, մանավանդ, Արկադի Մանուչարովը, Վարդան Հակոբյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Համլետ Գրիգորյանը, Ռոլես Աղաջանյանը, Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը, Մուրադ Պետրոսյանը, Մաքսիմ Միրզոյանը և ուրիշներ: Նախաձեռնող խմբի առաջարկությամբ գիշերային հերթապահություն սահմանվեց ոչ միայն քաղաքի թաղամասերում, այլև շրջկենտրոններում, ադրբեջանական շրջաններին և ադրբեջանաբնակ գյուղերին հարակից հայկական բնակավայրերում: Նախաձեռնող խմբի գործունեությանը փորձեցին խոչընդոտել Ստեփանակերտի ադրբեջանցի բնակիչները, սակայն անհաջողության մատնվեցին: Լեռնային Ղարաբաղի որոշ իշխանավորներ Մոսկվայից և Բաքվից եկած էմիսարների աջակցությամբ ջանքեր էին գործադրում հանրահավաքները կասեցնելու և Լենինի անվան հրապարակը ցուցարարներից ազատելու համար: Ադրբեջանի ամբողջ քարոզչությունն ուղղված էր արցախահայության դեմ. վիրավորում էին հայերի ազգային արժանապատվությունը, հնչեցնում հակահայկական կոչեր: Մոսկվայից վերադարձած պատվիրակության անդամները, շարժման ակտիվիստները միաձայն և վճռական պահանջում էին հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան և որոշում ընդունել մարզը Հայաստանի հետ վերամիավորե-

լու վերաբերյալ: 1988թ. փետրվարի 15-ից հետո այդ հարցը դարձել էր նախաձեռնող խմբի հիմնական խնդիրը:

Հետո Վարդան Հակոբյանը կպատմի.

- Փետրվարի 17-ին, օրվա վերջին մեր պատվիրակությունը վերադարձավ Ստեփանակերտ: Դեռ Մոսկվայում անվանի պատմաբան, ծնունդով գարդմանցի Հրանտ Եպիսկոպոսյանը մեզ հորդորել էր. «Տղերք, հենց հասնեք Ստեփանակերտ, սեսիա արեք, ճիշտը դա է»: Նման միտք մեզ հուշել էին նաև Կենտկոմում: Այդ մասին հեռախոսով տեղյակ էինք պահել Արկադի Մանուչարովին: Արտահերթ նստաշրջան հրավիրելու նախապատրաստական աշխատանքները եռում էին: Ստեփանակերտ վերադառնալու հաջորդ օրը Արմո Ծատուրյանի, Ռազմիկ Պետրոսյանի և մյուս ակտիվ տղաների հետ միասին կազմեցինք մարզխորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջագիր, որի տակ ստորագրեց 67 պատգամավոր: Փետրվարի 19-ի օրվա վերջին Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչյա Բեգլարյանը և ես մտանք մարզխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ Շմավոն Պետրոսյանի մոտ ու պահանջագիրը դրեցինք նրա սեղանին: Ավելացնեմ, որ մինչև հաջորդ օրվա վերջը պահանջագրի տակ ստորագրած պատգամավորների թիվը հասել էր 87-ի: Ճշմարտությունը պահանջում է ասել, որ այս կազմակերպական խնդիրներում մեծ էր Ռազմիկ Պետրոսյանի դերակատարությունը, և պատահական չէր, որ մարդկանց, մանավանդ, ղեկավար աշխատողներին «համոզելու» դժվար գործը նրան էր հանձնարարվում:

1991-1992թթ. Երևանում բազմիցս հանդիպել եմ Արկադի Մանուչարովի հետ: Այդ հանդիպումների ժամանակ մեր խոսակցության հիմնական թեման 1988-ի փետրվարյան իրադարձություններն էին, «Կռունկի» կազմավորումը, իր՝ Մանուչարովի ձերբակալությունը և այլ հարցեր: Իմ այն հարցին, թե ինչն է նրան բերել արցախահայության պայքար, պատասխանեց բավականին խորհելուց հետո:

- Նախ՝ հազար պորտով արցախցի եմ, հետո էլ՝ 1965 թվականին Մոսկվա ուղարկված 13-ի ստորագրությամբ նամակի տակ եղել է նաև իմ ստորագրությունը: Հալածանքների պատճառով ստիպված էի հեռանալ հայրենի երկրամասից: Հետո վերադարձա յոթանասնականների վերջին: Այդ ամբողջ ժամանակաշրջանում մտովի գտնվում էի մեր օրրանում, պարզապես նրա կարոտից խեղդվում էի: Վերադառնալուց հետո նշանակվեցի շինանյութերի արտադրության կոմբինատի տնօրեն: Հավատացեք, վատ չէի աշխատում: Մարզի ղեկավարները գոհ էին իմ աշխատանքից: Սակայն ես էի դժգոհ: Տեսնում էի, որ իմ աչքի

առաջ մարզը խորտակվում է: Գորբաչովյան վերակառուցումը մեզ առաջ մղեց: Եվ չնայած ունեցել ենք նաև սայթաքումներ, նույնիսկ սխալներ, սակայն մեր պայքարի ոգին մնացել է մաքուր և ազնիվ: 1988-ի փետրվար-մարտյան օրերը, երևակայեցեք, իմ կյանքի ամենաերջանիկ պահերն էին: Դրա համար ես ինձ հպարտ եմ զգում…

1988. փետրվարի 20

Բաքվի իշխանությունների ազգայնամոլ և հայատյաց քաղաքականությունն ավելի էր վրդովվեցնում մարզի բնակչությանը: Փետրվարյան օրերին մարզկենտրոնում, ինչպես և շրջկենտրոններում հանրահավաքները զանգվածային բնույթ էին կրում: Փետրվարի 19-ին և 20-ին մարզի բոլոր շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում տեղի էին ունենում շրջխորհուրդների արտահերթ նստաշրջաններ, որտեղ ընդունվեցին որոշումներ, համաձայն որոնց պահանջվում էր մարզխորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրել և քննարկել մարզը Խորհրդային Հայաստանին վերամիավորելու հարցը: Այդ օրերին Բաքվից բերվել էին միլիցիայի նոր ուժեր, որոնք ահաբեկում էին մարզի բնակչությանը: Սակայն նախաձեռնող խումբը շարունակում էր արտահերթ նստաշրջան հրավիրելու նախապատրաստական աշխատանքները:

1988թ. փետրվարի 20-ի առավոտից սկսել էին Ստեփանակերտ ժամանել մարզխորհրդի պատգամավորները: Նույն այդ առավոտյան Ստեփանակերտ ժամանած Ադրկոմկուսի ԿԿ առաջին քարտուղար Ք. Բագիրովի հրահանգով միլիցիան փակել էր Ասկերանի ճանապարհը, որպեսզի այդ ուղղության շրջանների պատգամավորները չկարողանային հասնել Ստեփանակերտ: Նախաձեռնող խմբի ակտիվ գործունեության շնորհիվ իշխանությունները ստիպված եղան բացել փակված ճանապարհը: Փետրվարի 20-ի առավոտյան, ժամը 11-ին հրավիրվում է մրազխորհրդի գործկոմի նիստ: Ըստ արձանագրության, նիստին ներկա էին մարզգործկոմի նախագահ Վլադիմիր Օսիպովը, նրա տեղակալներ Հենրիխ Պողոսյանը, Շմավոն Պետրոսյանը, Արաքսյա Տոնոյանը, Ֆառուխ Հուսեյնովը, մարզխորհրդի գործկոմի քարտուղար Ռիմա Խաչիյանը, գործկոմի մյուս անդամները, այդ թվում նաև Բ. Կևորկովը, որը, Շմավոն Պետրոսյանի վկայությամբ, 15 տարվա ընթացքում ոչ մի անգամ չէր մասնակցել մարզգործկոմի նիստերին:[23] Նիստին ներկա էին նաև հրավիրվածներ՝ մարզգործկոմի կազմբաժնի վարիչ Կ. Բաբուրյանը, իրավաբանական բաժնի պետ Ռ. Իգոշկինան, ֆինբաժնի պետ Բ. Մինասյանը և ուրիշներ: Քննարկվեցին մի քանի հարցեր, որոնցից էին.

1. ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու մասին.

23. «Հայաստանի Հանրապետություն», թիվ 33, 20.02.1998

2. ԼՂԻՄ փողոցներում, հրապարակներում, պողոտաներում, զբոսայգիներում, այգիներում և պուրակներում ժողովների, հանրահավաքների, փողոցային երթերի, ցույցերի, այլ միջոցառումների անցկացման կարգի մասին:

Առաջին հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես է գալիս Կարեն Բաբուրյանը: Ելույթ են ունենում Վ. Գրիգորյանը, Լ. Ղազիյանը, Ս. Բաբայանը, Ա. Տոնոյանը, Բ. Կևորկովը, Հ. Պողոսյանը, Վ. Հայրապետյանը, Մ. Դանիելյանը և Վ. Օսիպովը:[24] Նիստն ընթանցել է բուռն վիճաբանություններով: Ելույթ ունեցողների մեծամասնությունն առաջարկեց ընդառաջել արտահերթ նստաշրջան պահանջող պատգամավորների խնդրանքին և այդ նույն օրը հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան: Սակայն գործկոմի արձանագրությունը ձևակերպվել է.

«1. Հետաձգել արտահերթ նստաշրջան հրավիրելու մասին հարցի քննարկումը.

2. Հանձնարարել նախագահին՝ մանդատային հանձնաժողովի հետ համատեղ ստուգել նստաշրջան պահանջած պատգամավորների լիազորությունների և տվյալների արժանահավատությունը»:[25]

Ինչպես երևում է, որոշման առաջին կետով հետաձգվում է արտահերթ նստաշրջանի հրավիրումը, իսկ երկրորդ կետով մարզգործկոմը թերահավատ է 20-րդ գումարման մարզային խորհրդի պատգամավորների իսկության հարցում: Մինչդեռ 20-րդ գումարման մարզխորհրդի ժողովրդական պատգամավորների 1987թ. հունիսի 21-ին տեղի ունեցած ընտրությունների արդյունքները քննարկվել էին նույն թվականի հուլիսի 8-ին տեղի ունեցած առաջին նստաշրջանում և հաստատվել ընտրված բոլոր 150 պատգամավորների լիազորությունները:[26]

Մարզգործկոմի նիստում մյուս հարցի քննարկումը մարզի ղեկավարության և Ադրբեջանի իշխանությունների համար սկզբունքային նշանակություն ուներ: «ԼՂԻՄ փողոցներում, հրապարակներում, պողոտաներում, զբոսայգիներում, այգիներում և պուրակներում ժողովների, հանրահավաքների, փողոցային երթերի, ցույցերի, այլ միջոցառումնե-

---

24. ԼՂՀ ԱԳՎ, ֆ.1, ց.2, գ.273, թ.4, արձանագրություն թիվ 5, որոշում՝ 3/56

25. նույնը

26. 2008թ. հունվարի 23-ին Ստեփանակերտի իր բնակարանում հանդիպեցի այն ժամանակ՝ 1988թ., մարզգործկոմի քարտուղար Ռիմա Խաչիյանի հետ և նրան ներկայացրի գործկոմի մի քանի անդամների պնդումն այն մասին, որ գործկոմի նիստը ձայների մեծամասնությամբ որոշել է այդ օրը հրավիրել մարզգործկոմի արտահերթ նստաշրջան: Ստացվում է, որ գործկոմի արձանագրությունը կեղծվել է: Սակայն Ռիմա Վասիլևնան համառեց, որ ինքը ճիշտ է ձևակերպել գործկոմի որոշումը, որը, մեր կարծիքով, հավաստի չէ:

րի անցկացման կարգի» ընդունումը ուժային մարմիններին հնարավորություններ կընձեռեր ճնշել ժողովրդական պայքարը:[27]

Արցախցիները, անկախ նրանից, թե ինչպես է ձևակերպվել մարզխորհրդի գործկոմի արձանագրությունը, եռուն աշխատանք էին տանում նույն այդ օրը մարզխորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու ուղղությամբ: Պատգամավորները, հաղթահարելով բոլոր դժվարությունները, տեղ էին հասնում լեռնային ճանապարհներով ու կածաններով: Պատգամավորներին Ստեփանակերտ հասցնելու գործում կարևոր դեր են խաղացել նախաձեռնող խմբի անդամները, մանավանդ, Ռազմիկ Պետրոսյանն ու Ռոլես Աղաջանյանը: Մարտակերտում օգնում էին Վիգեն Շիրինյանը, Յուրի Մարտիրոսյանը, Սլավա Աբրահամյանը, Վագիֆ Գալստյանը, Մարտունիում՝ Վլադիմիր Խաչատրյանը, Մանֆրեդ Բախշիյանը, Գրիգոր Ուլուբաբյանը, Հադրութում՝ Արթուր Մկրտչյանը, Էլեոնորա Կասպարովան, Վիգեն Գրիգորյանը, Էմիլ Աբրահամյանը, Ասկերանում՝ Սլավա Միրզոյանը, Սլավա Առուշանյանը, Կոմիտաս Դանիելյանը և ուրիշներ:

Փետրվարի 20-ին, ժամը 16-ին տեղի է ունեցել Ստեփանակերտի ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման քաղաքային խորհրդի 4-րդ արտահերթ նստաշրջանը, որին 110 պատգամավորից ներկա էր 92-ը: Այն կազմակերպել են Վլադիմիր Գևորգյանը, Անուշավան Պողոսյանը, որը և վարում էր նստաշրջանի աշխատանքները, Էռնեստ Հայրապետյանը, Ռոբերտ Բաղդասարյանը: Նրանց օգնում էին Վաչագան Հարությունյանը, Յուրի Ավագիմյանը և ուրիշներ:

Նստաշրջանը քննարկեց «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու մասին աշխատավորության պահանջի կապակցությամբ Ստեփանակերտ քաղաքում ստեղծված իրավիճակի մասին» հարցը: Նստաշրջանում ելույթ է ունեցել 11 ժողպատգամավոր:

Առաջինը ելույթ ունեցավ Ստեփանակերտի Մ. Գորկու անվան պետական դրամատիկական թատրոնի դերասանուհի, ժողովրդական արտիստ Մարգո Բալասանյանը: Նա ասաց.

-Մեր թատրոնը Ադրբեջանում միակ հայկական թատերական օջախն է, որը սպասարկում է հանրապետությունում բնակվող 500 հազար հայությանը: Մինչև քառասնական թվականների վերջերն Ադրբեջանում գործում էին չորս հայկական թատրոններ՝ Բաքվում, Կիրովաբադում, Ստեփանակերտում և Շուշիում: Դրանցից այսօր մնացել է մի-

27. ԼՂՀ ԱԳՎ, ֆ.1, g.2, գ.260, թ.6

այն Ստեփանակերտի թատրոնը: Աշխատանքի բնույթով ես հաճախակի եմ լինում Ղարաբաղի ամենածայրամասային բնակավայրերում և իրազեկ եմ այն տխուր փաստին, որ սոցիալ-տնտեսական ծանր վիճակի հետևանքով մեր լեռնային գյուղերը դատարկվում են: Դա այն պատճառներից մեկն է, որը արցախցիներին ստիպում է իրենց երկրամասը վերամիավորել Հայկական հանրապետության հետ: Բաքվում շուրջ 300 հազար հայ կա, սակայն մենք զրկված ենք նրանց համար ելույթ ունենալու հնարավորությունից: Ղարաբաղից հեռացած հայերին փոխարինելու են գալիս ադրբեջանցիները, որոնց թիվը գնալով ավելի է շատանում: Թե այդպես շարունակվի՝ շուտով երկրամասում իշխող կհանդիսանան ադրբեջանցիները:

Հարգելի պատգամավորներ, մեր թատրոնի կոլեկտիվն ինձ հանձնարարել է հայտնել իրենց ցանկությունը՝ Լեռնային Ղարաբաղը վերամիավորել Հայաստանի հետ:[28]

- Պատմական Փոքր Սյունիքը՝ Ղարաբաղը,- իր ելույթում նշեց մարզի մշակույթի արհմիության կոմիտեի նախագահ, ժողպատգամավոր Լաուրա Ղարայանը,- մինչև 1920-ական թվականների սկիզբը գտնվել է Հայաստանի կազմում: Սակայն հետո կատարվել է պատմական կոպիտ սխալ: Ես, որպես պատգամավոր, պահանջում եմ այդ սխալն ուղղել, որը մարզի ամբողջ բնակչության ցանկությունն է: Մեր մարզը զրկված է բազմաթիվ հնարավորություններից, նույնիսկ չունենք հրատարակելու իրավունք, չունենք հայերեն լեզվով կնիք, մշակույթի պալատ, անչափ թույլ է մարզի կուլտուր-լուսավորչական հիմնարկների նյութական բազան: Մեր բարձրացրած հարցում ազգայնական ոչ մի միտում չկա: Ես լիովին հավատում եմ, որ այն կվճռվի դրականորեն:[29]

- Արտահերթ նստաշրջանում,- ասաց Ղարմետաքսկոմբինատի կուսկոմիտեի քարտուղար Ռոբերտ Քոչարյանը,- քննարկվող հարցը պահանջում է ճիշտ և արդարացի լուծում: Ակնհայտ է, որ տասնյակ տարիներ շարունակ հանրապետության ղեկավարության կողմից կոպտորեն խախտվում է մարզի տնտեսական և սոցիալ-քաղաքական հարցերի լուծումը: Նսեմացվել են ինքնավար մարզի տնտեսության, մշակույթի, լուսավորության զարգացման շահերը, մանավանդ ազգային հպարտության զգացումը: Այդ տարիներին ակտիվորեն իրագործվել է արցախահայության ոչ հիմնավորված տեղահանում՝ հօգուտ ադրբեջանցիների թվի ավելացման: Այս հակազգային քաղաքականությունն

28. Նույնը, ֆ.135, g.2, գ.186, թ.7
29. Նույնը, թ.8

արդարացիորեն առաջ է բերել երկրամասի բնիկ հայության դժգոհությունը: Ես առաջարկում եմ հավանություն տալ և պաշտպանել երկրամասի հայ բնակչության պահանջին՝ մարզը վերամիավորել Հայաստանի հետ: Դրա համար անհրաժեշտ է անհապաղ հրավիրել մարզային խորհրդի արտահերթ նստաշրջան և այդ մասին ընդունել որոշում:[30]

- Մարզը և Ստեփանակերտը խիստ հուզված են,- իր ելույթում նշել է 2718-րդ ավտոշարասյան պետ Մաքսիմ Միրզոյանը:- Դա մի քանի օրվա գործ չէ, այն կատարվել է տասնամյակներում: Դեռևս հիսունական թվականների վերջերից մարզկոմն արգելել է Հայաստանից պատվիրակություններ գան Լեռնային Ղարաբաղ: Ինչպե՞ս հասկանալ, երբ մարզային թանգարանի տնօրենն աշխատանքից ազատվել է նրա համար, որ թանգարանի արխիվում պահվել են Սարգիս Աբրահամյանի և Բագրատ Ուլուբաբյանի գրքերը: Ինչո՞ւ մեր տպարանից հանվել են հայկական տառերը, չէ՞ որ այդ տառերն են մեզ հասցրել հայ պատմիչների, հայ հեղինակների, հունական, հռոմեական, արաբական և այլ գիտնականների ստեղծագործությունները: Մեծ հայրենականի տարիներին յուրաքանչյուր երեք արցախցուց մեկը մնացել է պատերազմի դաշտում, այդ այն դեպքում, երբ Ղարաբաղում ռազմական գործողություններ տեղի չեն ունեցել: Մի՞թե պատահական էր, երբ Բաքվի 26 կոմիսարներից ութը հայ է եղել: Զարմանում եմ. ինչու՞ են թաքցնում մեր պատմությունը, խեղաթյուրում այն: Եվ դա գիտակցաբար կատարում են հանրապետության գիտնականներ Ս. Աշուրբեյլին, Դ.Ախունդովը, Զ. Բունիաթովը, Ֆ. Մամեդովան և ուրիշներ: Սակայն ժողովրդին չես կարող խաբել, մեր համերաշխությունն անշեղ է:[31]

- Հայ ժողովուրդը,- ասաց Ստեփանակերտի կոնդենսատորների գործարանի բանվորուհի Իրինա Գևորգյանը,- հնագույն ժամանակներից ունեցել է զարգացած մշակույթ: Այսօրվա հայ ժողովրդի ձգտումը բխում է ժողովրդավարության և հրապարակայնության պահանջներից: Եվ դա խորթ է ադրբեջանցիների համար: Մենք արդարացիորեն պահանջում և պայքարում ենք լինել մեր ժողովրդի հետ: Ես մայր եմ, իմ ցանկությունն է, որպեսզի զավակներս չմոռանան մայրենի լեզուն, հնարավորություն ունենան դիտել հայկական հեռուստացույց, լսել հայերեն ռադիոհաղորդումներ, ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը, տեր կանգնել մեր պապական գերեզմաններին, պահպանել մեր երկրամասի ճարտարապետական հուշարձանները: Ես պահան-

30. Նույնը, թ.12
31. Նույնը, թ.14-15

ջում եմ Ղարաբաղը վերամիավորել մայր Հայաստանի հետ:[32]

«Սովետական Ղարաբաղ» թերթի աշխատակից, ժողպատգամավոր Արտաշես Գասպարյանը, կատարելով թիվ 56-րդ ընտրական օկրուգի իր ընտրողների հանձնարարությունը, մտցնում է հետևյալ առաջարկությունը. «Խնդրել մարզխորհրդի նստաշրջանին ԼՂԻՄ-ում անցկացնել հանրաքվե և նրա արդյունքների հիման վրա քննարկել ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ հետ միավորելու հարցը»:[33]

- Քսան տարում,- իր ելույթում նշեց Ստեփանակերտի թիվ 10 դպրոցի տնօրեն Անուշավան Պողոսյանը,- մարզի բնակավայրերից 32-ում փակվել են հայկական դպրոցները, 30 դպրոց էլ գտնվում է փակվելու եզրին: Վերջին 15 տարում, 1973 թվականից հետո, մարզի հայկական դպրոցներում աշակերտների թիվը կրճատվել է 39 տոկոսով: Զարմանալի և մտահոգիչ է նաև այն, որ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում հայ ժողովրդի պատմություն չի դասավանդվում: Կարելի է նման օրինակներ շատ բերել: Ես առաջարկում եմ ԼՂԻՄ-ը վերամիավորել Հայկական ԽՍՀ-ի հետ:[34]

Քաղխորհրդի նստաշրջանում հանդես եկան նաև կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի քարտուղար Հասմիկ Միքայելյանը և ուրիշներ, ովքեր իրենց ելույթներում պաշտպանեցին հնչած առաջարկությունները Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու անհրաժեշտության վերաբերյալ:[35]

Ստեփանակերտի 20-րդ գումարման քաղխորհրդի չորրորդ արտահերթ նստաշրջանն ընդունել է հետևյալ որոշումը.

«1. Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմին, նրա բաժիններին և ծառայություններին, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների ղեկավարներին՝ ապահովել հստակ և ռիթմիկ աշխատանքը բոլոր տեղամասերում, ամրապնդել աշխատանքային, արտադրական և հասարակական կարգապահությունը, արտադրական պլանների կատարումը.

2. Արտահայտելով աշխատավորության կամքը, քաղխորհրդի նստաշրջանը պաշտպանում է նրա պահանջները Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու վերաբերյալ: Այդ հարցի դրական լուծումը բխում է լե-

---

32. Նույնը, թ.16-17
33. Նույնը, թ.18
34. Նույնը, թ.19-20
35. Նույնը, թ. 22-23

նինյան ազգային քաղաքականությունից և մարզի աշխատավորության շահերից: Նստաշրջանը գտնում է, որ Հայաստանի հետ ԼՂԻՄ-ի միավորումը բխում է մարզի հայ բնակչության արմատական շահերից, նրա մշակութային և հոգևոր պահանջների բավարարումից:

3. Խնդրել ԼՂԻՄ մարզգործկոմին ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նստաշրջանում քննարկել տվյալ հարցը:

4. Խնդրել Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդների նախագահություններին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը՝ քննարկել և դրականորեն լուծել Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու մասին հարցը:[36]

Ընդունված այդ որոշումն անմիջապես հանձնվում է մարզկոմ և մարզխորհրդի գործկոմ:

Օրվա երկրորդ կեսին արդեն Ստեփանակերտ էին ժամանել մարզխորհրդի բավականին թվով պատգամավորներ: Նախաձեռնող խումբը հանձնարարում է մարզխորհրդի պատգամավոր Վարդան Հակոբյանին իր վրա վերցնել մարզգործկոմի նիստերի դահլիճում արտահերթ նստաշրջանն անցկացնելու կազմակերպչական աշխատանքները: Վարդան Հակոբյանը շարժման «շտաբի» վերածված «Սովետական Ղարաբաղ» թերթի գրականության և արվեստի բաժնից գնում է մարզգործկոմի շենք, այնտեղ պայմանավորվում պատգամավոր Ա. Ծատուրյանի հետ, և վերջինս սկսում է գրանցել ժամանած պատգամավորներին:

Բաքվի պահանջով մարզխորհրդի ադրբեջանցի պատգամավորները, որոնք թվով 26-ն էին, հրաժարվեցին մասնակցել նստաշրջանին: Հրաժարվեցին մասնակցել նաև մարզխորհրդի գործկոմի նախագահ Վ. Օսիպովը, մարզկոմի առաջին քարտուղար, գործկոմի անդամ Բ. Կևորկովը: Նստաշրջանի քվորումն ապահովելու համար նախաձեռնող խումբը գործում էր անվրեպ: Վարդան Հակոբյանը պատմում է, որ նախաձեռնող խմբից Սերժ Ասատրյանը մեկնեց Աշան և ձիով գյուղից Ստեփանակերտ բերեց պատգամավոր Ռաիսա Գրիգորյանին, որը հիվանդ էր, անկողնային վիճակում: Վերջինս սիրով համաձայնեց մասնակցել նստաշրջանին՝ նկատի ունենալով յուրաքանչյուր ձայնի վճռորոշ լինելը: Պատգամավորներ բերվեցին նաև այլ վայրերից:[37]

Ի դեպ, Արցախում «Ազգի» սեփական թղթակից Կիմ Գաբրիելյանը հետագայում գրել է, որ արտահերթ նստաշրջանի գումարմանը խոչընդ-

---

36. նույնը, էջ 24-26

37. «Ազատ Արցախ», N 5, 16.01.2003:

դոտում էին հենց իրենք՝ մարզգործկոմի ղեկավարները: Որպես օրինակ, բացի գործկոմի նախագահ Վլադիմիր Օսիպովից, նա նշում է նաև նրա տեղակալ Շմավոն Պետրոսյանի անունը, ամրագրելով, որ վերջինս «ջանք չէր խնայում կասեցնելու պատգամավորների նախաձեռնությունը՝ պատճառ բռնելով քվորումի բացակայությունը»: Նաև նշում է, որ Շմավոն Պետրոսյանի համար արտահերթ նստաշրջան հրավիրելու վերաբերյալ պատգամավորների երկու երրորդի գրավոր համաձայնությունը հիմք չդարձավ և նա պահանջեց յուրաքանչյուր պատգամավորի գրավոր համաձայնությունը: Իբր պահանջվող 70-ի փոխարեն ներկայացվել է 90 պատգամավորի գրավոր համաձայնություն:[38]

ԼՂԻՄ ժողպատգամավորների 20-րդ գումարման մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի նախագահ Վիգեն Հայրապետյանը հետագայում պատմել է. «Լենինի անվան հրապարակը մարդկանցով լեփ-լեցուն էր: Սե-սի-ա՝ վանկարկում էր ամբոխը: Ստեփանակերտ հասած պատգամավորներին մարդիկ ընդունում էին որպես հերոսների: Մարդկային ծովը նրանց համար ճանապարհ էր բացում դեպի մարզխորհրդի գործկոմի շենք: Ամեն անգամ, երբ պատգամավորների թիվն ավելանում էր թեկուզ մեկով, հավաքվածներն անսահման ուրախանում էին: Ճանապարհները փակ էին, իշխանություններն ամենուրեք պատգամավորներ էին «որսում»: «Մի կին պատգամավոր,- հետո պիտի պատմեին ականատեսները,- հասնելով նիստերի դահլիճ՝ ցույց տվեց վերարկուի տակ թաքցրած սուրը, ասելով, որ իր ճամփան ոչ մի թուրք չէր կարող փակել...»: Պատգամավորները, այնուամենայնիվ, եկան՝ շրջանցելով պահակակետերը, անտառներով և լեռներով: Ինչ-որ մեկի խելքը կտրեց նրանց կերակրել: Ոտքի վրա նրանք մի կտոր հաց էին ուտում և ներս մտնում»:[39]

2005թ. օգոստոսի 20-ին Շմավոն Պետրոսյանի հետ հանդիպեցի իր տանը: Զրույցի ժամանակ նրան հիշեցրի Կիմ Գաբրիելյանի վերոհիշյալ հրապարակման մասին: Շմավոն Միսակովիչը խիստ վիրավորված էր: Այդ առթիվ նա ասաց.

- Ես չգիտեմ, թե պարոն Կիմ Գաբրիելյանը որտեղից է վերցրել այդ տվյալները: Վարդան Հակոբյանը, Արմո Ծատուրյանը և ուրիշ պատգամավորներ կարող են վկայել, որ ես, որպես մարզխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ, գործել եմ օրենքի շրջանակներում: Միևնույն

---

38. «Ազգ», N 32, 20.02.2002

39. «Սովետական Ղարաբաղ», 20.02.1991:

ժամանակ՝ պաշտպանել եմ մարզխորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջը: Ընդհակառակը, ձգտել եմ արտահերթ նստաշրջան հրավիրելու խոչընդոտները վերացնել:

Ես նրան հարցրի.

- Պարոն Պետրոսյան, իսկ ինչո՞ւ ոչ գործկոմի նիստում և ոչ էլ նստաշրջանում ելույթ չեք ունեցել: Այդ մասին արձանագրություններում ոչինչ չկա:

- Պատկերացրեք,- հանգիստ պատասխանեց նա,- ելույթ ունեցողներն այնքան շատ էին, որ ինձ հերթ չհասավ: Ես ամենից շատ զբաղվում էի նստաշրջանն օրինավոր կազմակերպելու հարցով:

Նախատեսված էր մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը սկսել ժամը 16-ին: Մինչ այդ պետք էր տեղի ունենային մարզի շրջանային խորհուրդների նստաշրջանները, որոնց կազմակերպման գործում նախաձեռնող խմբի դերակատարությունը մեծ էր: Ռազմիկ Պետրոսյանը մեկ օրում հասցրեց ընկերների հետ լինել Մարտակերտում, Մարտունիում, Հադրութում, պայմանավորվածությունները կոնկրետ գործողության մեջ դնել: Եվ ինչպես նա վկայում է՝ տեղերում անուրանալի ջանքեր են ներդրել այդ գործում ակտիվ անձինք՝ Էռնեստ Հայրապետյանը, Յուրի Ավագիմյանը (Ստեփանակերտ), Էմիլ Աբրահամյանը, Էլեոնորա Գասպարյանը, Արթուր Մկրտչյանը, Վիգեն Գրիգորյանը (Հադրութ), Վլադիմիր Խաչատրյանը, Մանֆրեդ Բախշիյանը (Մարտունի), Սլավա Առուշանյանը, Սլավա Միրզոյանը, Կոմիտաս Դանիելյանը (Ասկերան), Վիգեն Շիրինյանը, Վագիֆ Գալստյանը (Մարտակերտ) և շատ ուրիշներ, բոլոր անունները հնարավոր չէ թվարկել: Նրանց բոլորանվեր աշխատանքի ու խիզախության շնորհիվ արդեն ներկայացել էր 111 պատգամավոր:

Նախքան մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը սկսելը՝ մարզխորհրդի մանդատային հանձնաժողովի նիստը մեկ անգամ ևս անդրադարձավ խնդրին: Քանի որ մանդատային հանձնաժողովի նախագահ Մայիլյանը նույնպես չէր ներկայացել, ուստի ընտրվեց հանձնաժողովի նոր նախագահ: Մանդատային հանձնաժողովը հաստատեց նշված քանակով պատգամավորների լիազորությունները և զեկուցեց նստաշրջանը սկսելու օրինականության մասին՝ քվորումն ապահովված էր:[40]

1988թ. փետրվարի 20-ի երեկոյան ժամը 20-ն անց 20 րոպեին նստաշրջանը սկսում է իր աշխատանքները: Ընդունված կարգի համա-

40. Պատմական նստաշրջան, Ստեփանակերտ, 2008, էջ 105

ձայն նստաշրջանը պետք է վարեր մարզգործկոմի նախագահը, որը չէր մասնակցում նիստին, կամ տեղակալներից մեկը, իսկ եթե նրանք բացակայում են կամ հրաժարվում՝ ինչպես այդ պարագայում էր, ապա պատգամավորները ստիպված են լինում նոր նախագահ ընտրել: Նախածեռնող խմբի հանձնարարությամբ նստաշրջանում պիտի նախագահեր Վարդան Հակոբյանը: Եվ նրա անունը՝ նախագահելու համար, առաջարկում է ժողպատգամավոր, շինանյութերի կոմբինատի շքանշանակիր բանվոր, ասկերանցի Ալեքսանդր Բաղդասարյանը (իհարկե, այդ հարցում նրան ուղղորդել էր Արկադի Մանուչարովը): Սակայն, ելնելով այն հանգամանքից, որ նստաշրջանի աշխատանքներին հետևում էին նաև Մոսկվայից ու Բաքվից ժամանած ղեկավար աշխատողներ, Վարդան Հակոբյանը նպատակահարմար գտավ, որպեսզի նստաշրջանի աշխատանքները վարի ռուսական կրթություն ունեցող պատգամավոր: Ուստի նրա առաջարկությամբ նստաշրջանի նախագահ է ընտրվում մարզխորհրդի ժողպատգամավոր, մարզժողկրթբաժնի վարիչ Վիգեն Հայրապետյանը:[41]

Այդ նույն առավոտյան Ստեփանակերտ ժամանած Ադրկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ք. Բաղիրովը ցանկացավ հանդիպել Վարդան Հակոբյանի հետ, որովհետև նրան էր հանձնարարված նստաշրջանն անցկացնելու գործի պատասխանատվությունը: Մարզկոմում հանրապետության ղեկավարները փորձեցին Հակոբյանին հեղափոխել՝ գործադրելով արևելյան քծնանքի իրենց ձևերը: Սակայն նրա պատասխանը հստակ մերժողական էր: Փորձեցին նրան նաև վախեցնել, սակայն դա ևս արհամարհվեց: Մարզգործկոմի շենք վերադառնալուց անմիջապես հետո Վարդան Հակոբյանին հայտնեցին, թե «ղեկավարությունը խնդրում է սպասել, իրենք էլ են մասնակցելու» նստաշրջանին: Դահլիճ գալով, Ք. Բաղիրովը՝ իր շքախմբով, գրավեց բեմը: Բաքվից ժամանածները փորձեցին համոզել «ճամփից շեղված» արցախցիներին, որպեսզի հրաժարվեն նստաշրջան անցկացնելու վճռից: Սակայն դա բացառված էր: Հրապարակից անընդհատ լսվում էր՝ սե-սի-ա: Ք. Բաղիրովը շարունակում էր «խոնարհ ու բարյացակամ» խոստումներ տալ, «կոկորդիլոսյան» արցունքներ թափել: Այդ ժամանակ, իր ցասումը հազիվ զսպելով, Վարդան Հակոբյանը մոտենում է

41. Մարզային միլիցիայի աշխատող Վալերի Քոչարյանը բերում է մի բարձրախոս, որով հրապարակում հավաքված ցուցարարներին տեղյակ է պահվում նստաշրջանի ընթացքի մասին: Միևնույն ժամանակ մարզգործկոմի քարտուղար Ռիմա Վասիլևնայի խնդրանքով դահլիճ է բերվում ձայնագրիչ և գրանցվում նստաշրջանի բոլոր ելույթները: Սակայն ձայնագրված այդ ժապավենը հետագայում անհետացել է:

խոսափողին ու վճռականորեն ասում.

- Մինչև գիշեր էլ մնաք դահլիճում, միևնույն է, արդյունքի չեք հասնի: Դուք խանգարում եք մեզ: Մենք հիմա սկսում ենք նստաշրջանի աշխատանքը, կարող եք նստել, կարող եք գնալ՝ ինքներդ որոշեցեք, միայն թե մեզ մի խանգարեք…

Այս խոսքերից անմիջապես հետո Բաղիրովը ստիպված էր իր շքախմբով լքել դահլիճը:

Վարդան Հակոբյանը հետո հիշել է.

- Նստաշրջանի նախագահ ընտրված Վիգեն Հայրապետյանը մոտ կանչեց ինձ ու հարցրեց. «Պա զեկուցողը հուվա՞»: Չէինք մտածել այդ մասին: Սերգեյ Դավթյանը տեղից հուշեց, որ նման նստաշրջաններում կարևոր էլ չէ զեկուցումը, գլխավորը ելույթներն ու որոշումներն են: Այնուամենայնիվ, որպեսզի հետագայում այստեղ ել «բաց» չգտնեն, մոտեցա ամբիոնին ու սկսեցի իմ ելույթը, որը փաստորեն փոխարինեց զեկուցմանը…[42]

ԼՂԻՄ 20-րդ գումարման մարզխորհրդի պատգամավորների չորրորդ արտահերթ նստաշրջանը բացում է Մարտունու թիվ 109-րդ ընտրական օկրուգի պատգամավոր Սուրեն Դանիելյանը: Նա պատգամավորներին հաղորդում է, որ մանդատային հանձնաժողովի արձանագրության համաձայն նստաշրջան հրավիրելու պահանջագրի տակ ստորագրել է 87 պատգամավոր, որոնք օրինական ընտրված պատգամավորներ են: Ապա Վիգեն Հայրապետյանն իր հերթին հաղորդում է, որ 150 պատգամավորից ներկա է 111-ը, բացակայում է 39-ը:

Նստաշրջանի աշխատանքները լուսաբանելու համար հրավիրվում են մարզային թերթի և ռադիոյի աշխատակիցները: Այնուհետև հաստատվում է նստաշրջանի օրակարգը: Որից հետո առաջին խոսքը տրվում է Կարմիր գյուղի թիվ 50 ընտրական օկրուգի պատգամավոր Վարդան Հակոբյանին: Նրա ելույթը շարունակվել է 40 րոպե: Նա, մասնավորապես, նշել է.

-Մեր մարզը տնտեսական և մշակութային առումներով կտրված է ազգային արմատներից: Տարիների փորձը ցույց է տալիս, որ Ադրբեջանական ԽՍՀ կազմում Լեռնային Ղարաբաղի գտնվելը եղել է սխալ, չի համապատասխանել ազգերի ու ժողովուրդների իրավահավասար ու լիարժեք զարգացման սկզբունքներին: Անցյալի տխրահռչակ այդ սխալը պետք է ուղղվի: Իրոք՝ այդ հարցը բարձրացվել է շատ անգամ: Հիմա վերակառուցման շրջան է, այն պետք է արմատականորեն վճռ-

42. «Ազատ Արցախ», N5, 16.01.2003

վի: Իմ ընտրողները պատվիրել են պաշտպանել մարզը Հայաստանի հետ վերամիավորելու պահանջը: Անկասկած՝ պատմական մեր Արցախը պետք է լինի մայր Հայաստանի հետ:[43]

- Արժանապատվության կոխկրտում է,- իր ելույթում նշեց կոնդենսատորների գործարանի բանվորուհի Արմիդա Գաբրիելյանը,- երբ հայ մանուկն անհաղորդ է հայ երգին, հայ մշակույթին: Մեզնից ո՞վ է Կոմիտաս լսում, ո՞վ է քաջածանոթ մեր պատմությանը: Մեր երեխաները դպրոցում չորս լեզու են սովորում, սակայն չգիտեն հայ ժողովրդի պատմությունը: Ոչ մի նահանջ: Մեր պահանջը հոգևոր սնունդ է, մենք ուզում ենք հայ մնալ, մենք պայքարում ենք ազգի ապագայի համար: Մեր սկսածն արդար, ազնիվ գործ է, օրինական պահանջ:[44]

- Վերջերս Ղարաբաղում տեղի ունեցող ելույթներն ու ցույցերը,- իր ելույթում ասաց Ղարմետաքսկոմբինատի ջուլհակուհի Սուրայա Գրիգորյանը,- համոզում են, թե որքան բուռն է մայր Հայաստանի հետ վերամիավորվելու ղարաբաղցիների ցանկությունը: Վերջապես՝ լցվել է մեր ժողովրդի համբերության բաժակը: Մեր կոմբինատի երեքհազարանոց կոլեկտիվի անունից կոչ եմ անում պաշտպանել ղարաբաղցիների արդար պահանջը և մարզը վերամիավորել մայր Հայաստանի հետ: Անհրաժեշտ է Հայաստանից Լեռնային Ղարաբաղի բռնազատման սխալն ուղղել:[45]

- Բարձրացված հարցը,- իր ելույթում ընդգծեց Ստեփանակերտի կոշկի ֆաբրիկայի բանվորուհի Տատյանա Սոբոլևան,- ամենևին էլ ազգայնական հարց չէ, այլ ժողովրդի բնականոն ցանկություն, որի նպատակն է պաշտպանել սեփական շահերը: Բոլորին կոչ եմ անում քվեարկել Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու օգտին:[46]

-Արցախահայությունը,- իր ելույթում նշեց Ստեփանակերտի կաթնամթերման կոմբինատի տնօրեն Արմո Ծատուրյանը,- մեզ ուղեկցելով այս դահլիճ, լիովին համոզված է, որ արդարացիորեն կվճռվի Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Ակնհայտ է, որ 1921թ. թույլատրվել է կոպիտ սխալ: Այսօր արցախահայությունը չի ցավում այն բոլոր պակասությունների համար, ինչ- որ կրում է, այլ արդարացիորեն պահանջում է մարզը վերամիավորել հայրենիքի՝

---

43. Պատմական նստաշրջան, էջ 36
44. Նույնը, էջ 38-40
45. Նույնը, էջ 42
46. Նույնը, էջ 44

մայր Հայաստանի հետ: Դա հնարավորություն կտա պահպանել սեփական լեզուն, սեփական մշակույթը, սովորությունները, հոգեբանությունը: Առանց դրանց կվերանա բազմաչարչար ղարաբաղցի հայը: Ահա թե ինչու է նա պայքարում Ադրբեջանից ազատագրվելու համար: Տեսեք. մեր կոմբինատի կնիքի վրայից բացակայում է հայերեն գրառումը, մինչդեռ մեծատառերով գրված է ադրբեջաներեն, այդ այն դեպքում, երբ պատվերում նման պահանջ չի եղել: Արտահայտելով իմ ընտրողների ցանկությունը, բոլորին կոչ եմ անում քվեարկել Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու օգտին: Դա կլինի արդարացի:[47]

- Վերակառուցումը, ժողովրդավարությունը,- իր ելույթում շեշտեց Ստեփանակերտի սննդի կոմբինատի բանվորուհի Նաիրա Ավանեսյանը,- վերջապես հնարավորություն տվեցին արտահայտել մեր սրտի խոսքը և դարերից եկող մեր իղձերը: Սա ազգային արժանապատվության հարց է: Մենք զրկված ենք մեր մշակույթից: Միացնում ենք հեռուստացույցը՝ մայրենի լեզվով ոչինչ չենք լսում ու տեսնում: Մենք ազգությամբ հայ ենք և ցանկանում ենք լինել հայկական հանրապետության կազմի մեջ, մանավանդ, որ Ղարաբաղը՝ պատմական Արցախը, դարեր շարունակ եղել է Հայաստանի հետ: Մեր խնդիրը միանգամայն արդարացի է: Պահանջում ենք հարցին մոտենալ օբյեկտիվորեն:[48]

- Արցախցիներն աչքի են ընկել թե ցարական և թե խորհրդային բանակներում, -իր ելույթում ընդգծեց պատերազմի և աշխատանքի վետերան Մամիկոն Խաչատուրովը: - Մեծ հայրենականում Արցախը տվել է 32 գեներալ, 22.5 հազար զոհ, 20 հազարը պարգևատրվել է տարբեր մեդալներով: Պատերազմի տարիներին արցախցիները նվիրել են 7 կգ ոսկի (պետք է լինի 2.5 կգ.- Հ. Ա.), մոտ 80 հազար տաք հագուստեղեն, 48 հազար ծանրոց: Եվ այսօր մեզ անվանում են «ազգայնամոլներ»: Արցախցիները կռվել են բոլոր ռազմաճակատներում: Այսօր Ադրբեջանում անամոթաբար հարցնում են. ինչո՞ւ ես ինստիտուտն ավարտել Երևանում: Վերջ: Խնդրում ենք որոշում ընդունել և երկրամասը վերամիավորել Հայաստանին:[49]

Նստաշրջանում ելույթ է ունեցել 45 պատգամավոր: Բոլորի պահանջը մեկն էր՝ Լեռնային Ղարաբաղը վերամիավորել Հայաստանի հետ:

---

47. Նույնը, էջ 64-66
48. Նույնը, էջ 70
49. Նույնը, էջ 80-82

ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման մարզխորհրդի չորրորդ արտահերթ նստաշրջանն ընդունել է հետևյալ պատմական որոշումը.

«ԼՂԻՄ-Ը
ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԽՍՀ ԿԱԶՄԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԿԱԶՄ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԽՍՀ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՌՋԵՎ ՄԻՋՆՈՐԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի պատգամավորների ելույթները ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ անցնելու համար Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների առջև միջնորդելու մասին, Լեռնային Ղարաբաղի ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում է.

Ընդառաջելով ԼՂԻՄ աշխատավորության ցանկություններին, խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խորապես դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերի ըմբռնման զգացում և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու մասին հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀ Միության Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու հարցին դրական լուծում տալու մասին»:[50]

Լսելով որոշման մասին, հրապարակում հավաքված ցուցարարները պատգամավորներին դիմավորում էին բուռն ծափահարություններով և ցնծալի գոչյուններով:

- Նստաշրջանն ավարտվելուց հետո,- պատմում է Վարդան Հակոբյանը,- մարզկոմի մուտքի աստիճանների վրա անհամբեր սպասող ժողովրդի առաջ բարձրախոսով կարճ ելույթ եմ ունենում: Թե նախաձեռնող խմբի շտաբում և թե հրապարակում ողջագուրանքներով ինձ «խեղդում» էին: Սա համարում եմ իմ կյանքի ամենաչքնաղ պահը:[51]

Պարզվում է, որ մարզխորհրդի գործկոմի նախագահ Վ. Օսիպովը վերցրել էր մարզգործկոմի կնիքը և անհետացել: Ստիպված էին ընդունված որոշումը վավերացնել մարզխորհրդի գործկոմի շտամպով և մարզխորհրդի գործկոմի նախագահության անդամների ստորագրու-

50. «Սովետական Ղարաբաղ», 21.02.1988
51. «Ազատ Արցախ», N5, 16.01.2003

թյուններով: Մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կևորկովը և Ադրկոմ-կուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ք. Բաղիրովը խմբագիր Եղիշե Սարգսյանից պահանջում են նստաշրջանի որոշումը չհրապարակել «Սովետական Ղարաբաղ» և «Սովետսկի Կարաբախ» թերթերում: Մինչդեռ հազարավոր ցուցարարներ՝ շրջապատելով տպարանը, պահանջում էին նստաշրջանի ընդունած որոշումը հրապարակել նշված թերթերում: Նախաձեռնող խմբի հանձնարարությամբ այդ աշխատանքը ղեկավարում էր խմբի անդամ Համլետ Գրիգորյանը: Նա տպարանում մնում է այնքան ժամանակ, մինչև թերթերը լույս են տեսնում մի քանի հազար օրինակ տպաքանակով:

Նստաշրջանի ընդունած որոշումը պետք էր անհապաղ ուղարկվեր Երևան, Մոսկվա, Բաքու և այլ հասցեներով: Ադրբեջանի իշխանությունների պահանջով փակվել էին փոստային և ոչ փոստային ճանապարհները: Սակայն ինչ էլ որ լիներ, պետք էր այն ուղարկվեր: Վարդան Հակոբյանը հիշում է.

-Ռոլես Աղաջանյանը, Ռոբերտ Բաղդասարյանը և Պավել Նաջարյանը Արկադի Մանուչարովի մոտ՝ շինանյութերի կոմբինատում, պայմանավորվելով անելիքների մասին, ճանապարհ են ընկնում դեպի Երևան՝ Ռոլեսի մեքենայով: Բայց Շուշի չհասած, բախվելով ազերիների թափորին, ետ են դառնում: Ուրեմն՝ ցամաքային ճանապարհով որոշումը տեղ հասցնելն արդեն բացառվում էր: Ի՞նչ անել, ինչպե՞ս վարվել: Այստեղ էլ նորից մեր քաջ տղաներն իրենց հնարամտությամբ գերազանցում են թշնամուն: Նվիրյալների մի փոքրիկ «թափորի» ուղեկցությամբ «մահացած» հին կոմունիստի դագաղը, որի մեջ էր որոշումը, «Շտապ օգնության» մեքենայով տարվում է Ստեփանակերտի օդանավակայան՝ դարձյալ Ռոլես Աղաջանյանի, Պավել Նաջարյանի և Ռոբերտ Բաղդասարյանի կողմից: Օդանավակայանում նրանց միանում են բժիշկ Վալերի Մարությանն ու Ռազմիկ Պետրոսյանը և կազմակերպված ձևով, Ռոբերտ Բաղդասարյանի միջոցով, պատմական որոշումն ուղղաթիռով հասնում է Երևան: Արցախը դարձել էր աշխարհի ամենաթեժ կետը…[52]

Արցախի հիմնախնդիրը դեմ առավ գորբաչովյան պատնեշին: Նստաշրջանի հաջորդ օրը՝ փետրվարի 21-ին, ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն ընդունեց «Լեռնային Ղարաբաղի դեպքերի մասին» որոշում, որի մասին ՏԱՍՍ-ի հաղորդագրությունը հրապարակվեց փետրվարի 22-

52. Նույնը:

ին:[53] Այդ որոշման մեջ եզրակացվում էր, թե իբր Ադրբեջանական ԽՍՀ-ից ԼՂԻՄ-ի անջատումը հակասում է հայ և ադրբեջանական ժողովուրդների շահերին ու ցանկություններին: Շարժման ակտիվիստները բնորոշվում են որպես «ծայրահեղականներ» և «ազգայնամոլներ»:

Փետրվարի 22-ին Ք. Բաղիրովի թիմին Մոսկվայից օգնության եկան ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Գ. Ռազումովսկին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի առաջին տեղակալ Պ. Դեմիչևը: Փետրվարի 22-ին Ասկերանում նոր էր ավարտվել շրջանային ակտիվի նիստը, երբ լուր ստացվեց, թե մի խումբ ծայրահեղական ազգայնամոլների գլխավորությամբ 8-10 հազար ադրբեջանցիներ Աղդամի կողմից հարձակվել են Ասկերանի շրջանի վրա: Նրանք անարգել առաջանում էին կարգուկանոնի մի խումբ «պահապանների»՝ միլիցիոներների ուղեկցությամբ: Ասկերանի մատույցներում ավանի և մոտակա գյուղերի բնակիչները փակում են ջարդարարների ճանապարհը և ետ մղում նրանց: Ի պատասխան դրան և լրատվական կեղծարարությունների՝ Ստեփանակերտի Լենինի անվան հրապարակում հավաքված տասնյակ հազարավոր ցուցարարներ որոշում են այդ օրվանից մարզում հայտարարել համընդհանուր գործադուլ: Այն շարունակվել է մինչև մարտի 2-ը:

Մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կևորկովի նկատմամբ, որը 15 տարի իշխում էր մարզում, համաժողովրդական ատելությունը հասել էր իր գագաթնակետին: ԼՂ կուսմարզկոմի փետրվարի 23-ի պլենումը նրան ազատեց զբաղեցրած պաշտոնից և մարզկոմի առաջին քարտուղար ընտրեց Հենրիխ Անդրեյի Պողոսյանին: Պլենումի ընդունած որոշման մասին, որին անհամբեր սպասում էին հրապարակում, հավաքված ցուցարարներին հաղորդեց Ասկերանի կուսշրջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանը: Այն ընդունվեց բուռն ծափահարություններով: Հենրիխ Պողոսյանը մեր ժողովրդի նվիրյալ զավակներից էր: Նա ամբիոն է բարձրանում՝ որպես մարզկոմի նորընտիր առաջին քարտուղար, բնակչությանը կոչ անում դադարեցնել գործադուլը, վերսկսել աշխատանքները: Արցախցիներին համանման կոչով դիմում են նաև Պ. Դեմիչևն ու Գ. Ռազումովսկին:

Շարժումն առաջ էր ընթանում բուռն թափով:

53.«Правда», 22.02.1988

«Կռունկի» ծնունդը

1988թ. փետրվարի երրորդ տասնօրյակի սկզբից Ստեփանակերտում և Երևանում տեղի էին ունենում հանրահավաքներ և շարունակվում էին գործադուլները: Հանրահավաքների մասնակիցները կենտրոնական իշխանություններից պահանջում էին իրագործել արցախահայության արդարացի և սահմանադրական պահանջը: Երևանում և ամբողջ Հայաստանում ընթացող Ղարաբաղյան շարժումը ղեկավարելու և ընթացք տալու համար անհրաժեշտություն զգացվեց ստեղծել մի ղեկավար մարմին: Փետրվարի 22-ի գիշերը Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի շենքում ձևավորվեց այդ մարմինը, որն անվանվեց «Ղարաբաղի պաշտպանության կոմիտե», կարճ՝ «Ղարաբաղ» կոմիտե: Այն գլխավորում էր տնտեսագետ Իգոր Մուրադյանը: «Ղարաբաղ» կոմիտեի հիմնական խնդիրն էր արցախահայության պահանջին սատար կանգնելու համար ոտքի հանել ողջ հայությանը և Խորհրդային Միության բազմազգ ժողովուրդներին: «Ղարաբաղ» կոմիտեն անմիջապես՝ հենց փետրվարի 23-ին, պահանջեց հրավիրել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան և քննարկել արցախցիների որոշումը՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու մասին: Փետրվարի 24-ին տեղի ունեցած հանրահավաքում Իգոր Մուրադյանը հայտարարում է, թե «Ղարաբաղ» կոմիտեն իր վրա է վերցնում հանրապետությունում շարժման հետ առնչվող բոլոր գործողությունները ղեկավարելու պատասխանատվությունը:

Օր-օրի բարձրանում էր «Ղարաբաղ» կոմիտեի հեղինակությունը: Արդեն փետրվարի 25-26-ին Օպերայի և բալետի թատրոնի հրապարակում ցուցարարների թիվը հասել էր մինչև կես միլիոնի: Իգոր Մուրադյանը, ցուցարարներին ներկայացնելով «Ղարաբաղ» կոմիտեի գործունեության ծրագիրը, միևնույն ժամանակ հանրապետության իշխանություններից պահանջում էր կոմիտեին հնարավորություն տալ հանրապետության բնակչությանը տեղեկացնել Լեռնային Ղարաբաղում տիրող իրավիճակի մասին, այդ նպատակով օգտագործելով լրատվամիջոցները:[54]

-1988-ի այդ օրերին,- մեր հանդիպումներից մեկի ժամանակ պատմել է Արկադի Մանուչարովը,- Երևանում տեղի ունեցող իրադարձությունների մասին ինձ միշտ տեղյակ էր պահում Իգոր Մուրադյանը և

54. ՀԱԱ, ֆ.4546, ց.1, գ.1, թ.18-19

առաջարկում համանման կոմիտե ստեղծել նաև Ղարաբաղում: Ես երկմտանքի մեջ էի: Այնուամենայնիվ, Իգոր Մուրադյանի այդ անընդհատ հորդորանքն ինձ ստիպեց դիմել գործնական քայլերի: Սկսեցի աշխատել ստեղծվելիք կազմակերպության ծրագրի ու կանոնադրության վրա: Չնայած համանման աշխատանքի փորձ չունեի, սակայն աշխատանքները շարժվում էին տեղից: Ինձ օգնում էին Վարդան Հակոբյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչյա Բեգլարյանը, Ռոլես Աղաջանյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Համլետ Գրիգորյանը, Էռնեստ Հայրապետյանը և մյուսները: Արցախում քաղաքական որևէ կազմակերպություն ունենալու անհրաժեշտությունը զգացվել է դեռևս փետրվարի կեսերին, երբ ազգային-ազատագրական պայքարն արդեն համաժողովրդական բնույթ էր ընդունել: Միայն նման կազմակերպությունը կարող էր գլխավորել ժողովրդին ու լուծել շարժման ռազմավարությունը: Մեր ստեղծած նախաձեռնող խումբը կատարում էր հենց այդ գործառույթը:

Այդ օրերին՝ փետրվարի 27-29-ին, Սումգայիթում կազմակերպվեց հայերի ցեղասպանություն: Այդ մասին Ստեփանակերտում իմացան 2-3 օր ուշացումով: Ժողովրդական ցասումը հասել էր իր բարձրակետին: Ստեփանակերտի Լենինի անվան հրապարակն ասես վառվում էր մարդկանց զայրույթից: Իրար ետևից ամբիոն բարձրացողները մերկացնում էին «սումգայիթի» կազմակերպիչներին և երկրի ղեկավարությունից պահանջում արժանի պատիժ կիրառել հանցագործների նկատմամբ: Սումգայիթում թուրք-ազերիները գերազանցել էին իրենց բոլոր վայրագությունները, իսկ դա անամոթաբար թաքցնում էին կենտրոնական իշխանությունները և ամբողջովին խեղաթյուրում իրողությունը:[55]

Նախաձեռնող խումբն իշխանություններին օգնում էր Սումգայիթից փախստականներին օգնելու ու տեղավորելու հարցում: Մարտի 1-ին նա որոշում է մարտի 2-ից, Մ. Գորբաչովին ծննդյան օրվա կապակցությամբ, դադարեցնել գործադուլը: Այդ մասին հեռագրում են Մ. Գորբաչովին, շնորհավորում ծնունդը և հույս հայտնում, որ նա արդարացիորեն կլուծի արցախահայության խնդրանքը:

Իրոք՝ նախաձեռնող խմբի համար կարևոր նշանակություն ուներ օգնել մարզի իշխանություններին՝ գործադուլը դադարեցնելու համար: Այդ ռազմավարական խնդիրը բխում էր մարզի շահերից: Այդ առթիվ գալով պայմանավորվածության, որ մարտի 2-ից կդադարեցվի

55. Տես՝ *Сумгаит... Геноцид... Гласность...?, Ереван, 1996*

գործադուլը, նախաձեռնող խումբն անցավ քաղաքական կազմակերպությունը ձևավորելու գործնական քայլերին: Մարտի 1-ի ուշ երեկոյան, նախաձեռնող խմբի անդամ Համլետ Գրիգորյանը, մոտենալով հրապարակում տեղադրված ամբիոնին, խմբի անունից հայտարարում է, որ ստեղծվում է քաղաքական կազմակերպություն, անհրաժեշտ է յուրաքանչյուր կոլեկտիվից ընտրել երկուական պատգամավոր՝ հավաքին մասնակցելու համար, որը տեղի կունենա «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագրության շենքում: Հենց հրապարակում, ժողովրդավարական կարգով, ընտրվում է 66 հոգի, որոնք հավաքվում են թերթի խմբագրատան նկուղային հարկի դահլիճում, որտեղ և տեղի է ունենում նիստը: Այդ նիստում ընտրվում է խորհուրդ, որն անվանվում է նաև կոմիտե, որը բաղկացած էր 11 անդամից: Կոմիտեի նախագահ ընտրվեց Արկադի Մանուչարովը, տեղակալներ՝ Վարդան Հակոբյանը և Ռոբերտ Բաղդասարյանը:[56] Ստեղծվում է 10 հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

<u>Հանրահավաքների (ցույցերի) կազմակերպման գծով՝</u> Գալստյան Ժաննա (նախագահ), Նաջարյան Պավել, Գրիգորյան Ռոբերտ, Գրիգորյան Համլետ, Բադալյան Վիգեն (անդամներ):

<u>Ցուցապաստառների կազմակերպման գծով՝</u> Ղազարյան Էդուարդ (նախագահ), Հակոբյան Արմեն, Զաքարյան Հենրիխ (անդամներ):

<u>Ֆինանսների գծով՝</u> Աղաջանյան Ռոլես (նախագահ), Մովսիսյան Համլետ, Հարությունյան Ալեքսանդր (անդամներ):

<u>Նկարահանումների իրագործման գծով՝</u> Նաջարյան Աշոտ (նախագահ), Բալայան Միքայել, Ասրյան Սուրեն, Կարապետյան Բակուր (անդամներ):

<u>Ներգաղթի և արտագաղթի գծով՝</u> Պետրոսյան Ռազմիկ (նախագահ), Սարգսյան Վլադիմիր, Օվչյան Բենիկ (անդամներ):

<u>Քաղաքական հարցերի գծով՝</u> Քոչարյան Ռոբերտ (նախագահ), Սարգսյան Սերժ, Միրզոյան Մաքսիմ, Աթաջանյան Վասիլի, Պետրոսյան Գեորգի, Հարությունյան Շուրա (անդամներ):

<u>Լրատվության գծով՝</u> Բեգլարյան Հրաչյա (նախագահ), Հակոբյան Վարդան, Գաբրիելյան Գուրգեն (անդամներ):

<u>Հասարակական կարգի պահպանման գծով՝</u> Ջհանգիրյան Յուրի (նախագահ), Լաչինյան Արսեն, Բաղդասարյան Միքայել, Բաղդասար-

56. 1992թ. մարտի 8-ին Շուշիի ազատագրման առաջին օրը բանտում հայտնաբերվել է մի ալբոմ, որտեղ զետեղված էին «Կռունկի» մի շարք անդամների լուսանկարները՝ նրանց անձնական գործերի համարներով («ԼՂՀ Հանրապետություն», 09.07.1996):

յան Ռոբերտ, Բաբայան Վարդան, Բարսեղյան Կամո, Բարսեղյան Վալերի, Ավանեսյան Վլադիմիր, Բեգլարյան Վլադիմիր, Քոչարյան Ռազմիկ, Անտոնյան Ռոմա, Առուշանյան Բորիս, Մելքումյան Օլեգ, Շահրամանյան Էդուարդ (անդամներ):

Քարտուղարության գծով՝ Խաչատրյան Սերգեյ (նախագահ), Օհանջանյան Կարեն, Անդրյան Կարեն (անդամներ):[57]

Նիստից հետո Ա. Մանուչարովը «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագրության երկրորդ հարկում գտնվող Գուրգեն Գաբրիելյանի առանձնասենյակի պատուհանից հրապարակում հավաքված մարդկանց պատմում է «Կռունկի» ստեղծման մասին, ապա Հ. Բեգլարյանի, Մ. Միրզոյանի և Ռ Քոչարյանի հետ գնում են կուսմարզկոմ ու կոմիտեի ստեղծման մասին տեղյակ պահում ղեկավար մարմիններին: Այստեղ նրանց խորհուրդ են տալիս դիմել ցուցարարներին ու կոչ անել դուրս գալ աշխատանքի: Աշխատանքները վերսկսվում են մարտի 3-ից:[58]

«Կռունկի» խորհրդի մարտի 3-ի ընդլայնված նիստում քննարկվում և միաձայն ընդունվում է կազմակերպության կանոնադրության նախագիծը: Մարտի 5-ին Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմը գրանցում է «Կռունկ» հասարակական կազմակերպությունը և հաստատում նրա կոնանադրությունը:[59]

Չնայած «Կռունկ»-ը կարճ ժամանակ է գոյատևել, սակայն նա մարզում ունեցել է մեծ հեղինակություն և ծավալել է լայն զանգվածային աշխատանք: Այն գործել է ԽՍՀՄ Սահմանադրության 51-րդ հոդվածի

---

57. Խաչատրյան Սերգեյ, Վաստակված պատիվ, Ստեփանակերտ, 2002թ., էջ 247-248:

58. Նույնը, էջ 246

59. Ստեղծված կազմակերպությանը քանդակագործ Արմեն Հակոբյանի առաջարկությամբ տրվում է «Կռունկ» անվանումը: Իբր այն հապավում է և նշանակում է «Комитет революционного управления Нагорного Карабаха» («Լեռնային Ղարաբաղի հեղափոխական կառավարման կոմիտե») («Ազատ Ցսախ», 12, 14 և 18 մարտի, 2002թ.): Ի դեպ, «Կռունկ» նման բացատրությունը հրապարակվել է նաև կենտրոնական մամուլում: «Կռունկի» կոմիտեի անդամներ Վարդան Հակոբյանը և Համլետ Գրիգորյանը բացատրում են, որ այստեղ ոչ մի հապավում էլ չկա, դա հորինվել է ոմանց կողմից: Կոմիտեն կազմակերպությունը «Կռունկ» անվանելով, պարզապես ի նկատի ուներ հայրենիքի նկատմամբ ունեցած կարոտը, թախիծը: Այստեղ մեկ ուրիշ բացատրություն ևս. ես գիտեի, որ կոմիտեի արձանագրությունները պահվում են Սերգեյ Խաչատրյանի մոտ: 2003թ. օգոստոսի 15-ին նրա տանը ծանոթանալով այդ փաստաթղթերին, նույնիսկ որոշ էջեր արտագրեցի: Նախ՝ արձանագրությունները կազմված են նշումների ձևով, չկան «Կռունկ»-ի անվան հետ կապված որևէ բացատրություն, ինչպես և կոմիտեի անդամների ելույթները նիստերի ժամանակ: Սերգեյ Խաչատրյանին խորհուրդ տվեցի «Կռունկ»-ի հետ կապված բոլոր նյութերը հանձնել պետական արխիվ:

պահանջներին համապատասխան: «Կռունկ»-ը կանգնած է եղել արցախահայության ազգային- ազատագրական պայքարի գլուխ և համագործակցել այդ ժամանակ մարզում գործող հասարակական կազմակերպությունների հետ:

«Կռունկ»-ը կազմավորման առաջին օրվանից դարձել էր մարզի հասարկական-քաղաքական կյանքին շունչ տվողը: Կոմիտեի անդամներն աշխատում էին օր ու գիշեր, հանդիպումներ ունենում մարզի բնակչության հետ, նրանց պայքարի ոգեկոչում: Քաղաքի թաղամասերում կազմակերպված հերթապահությունների կետերը թարմացվում էին, որտեղից տեղեկություններ էին ստանում անցուդարձերի մասին: Այդ ուղղությամբ ջանասիրությամբ էին աշխատում Յուրի Ջհանգիրյանի գլխավորած հանձնաժողովի անդամները:[60]

Դեռևս փետրվարի 27-ին կենտրոնական իշխանությունների մի խումբ պատասխանատու աշխատողների հետ Լեռնային Ղարաբաղ էր ժամանել ԽՄԿԿ Կնետկոմի բաժնի վարիչ Կ. Բրուտենցը. որի նպատակն էր մոտիկից ծանոթանալ մարզի տնտեսական վիճակին և Կենտկոմ ներկայացնել համապատասխան զեկուցագիր: Նրանք հանդիպեցին Ղարաբաղյան շարժման արցախցի ղեկավարների և ակտիվիստների հետ, այցելեցին արդյունաբերական ձեռնարկություններ, ուսումնական հաստատություններ և պատրաստեցին հիմնավորված զեկուցագիր: Արկադի Մանուչարովը, Համլետ Գրիգորյանը և ուրիշներ, հանդիպելով խմբի անդամների հետ, նրանց ներկայացնում են Արցախ-Ղարաբաղի ընդհանուր վիճակը: Արցախցիները Կ. Բրուտենցի միջոցով մի շարք փաստաթղթեր և նամակ-բողոքներ ուղարկեցին միութենական ամենավերին ատյաններ: Մարտի 2-ին Ստեփանակերտ է ժամանում ազգությամբ հայ գիտնականների մի խումբ հետևյալ կազմով՝ ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոսներ Տ. Խաչատուրով, Ն. Ենիկոլոպով, թղթակից-անդամներ Ի. Աթաբեկով, Ա. Սարգսյան, պրոֆեսորներ Մ.Սարկիսով, Ռ. Սրապենյանց: Մոտ մեկ շաբաթ մնալով Ստեփանակերտում՝ նրանք բազմաթիվ հանդիպումներ են ունենում նաև «Կռունկ»-ի խորհրդի անդամներ Ա. Մանուչարովի, Վ. Հակոբյանի, Հ. Գրիգորյանի և այլոց հետ ու ստանում Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ բավականին տվյալներ: Գիտնականների այդ խումբը հանգամանորեն ուսումնասիրեց հարցը և կատարեց երկրամասում տեղի ունեցածի խոր վերլուծություն:[61] Հայաստանի և Ադրբեջանի իշխանություններին ներկայացված

60. Խաչատրյան Սերգեյ, Վաստակված պատիվ, Ստեփանակերտ, 2002թ., էջ 248-249:

61. Арутюнян В., События в Нагорном Карабахе, хроника, часть I, Ереван, 1990, ст.47-59

զեկուցագրում գիտնականների խումբը հանգում է այն եզրակացության, որ ստեղծված վիճակից դուրս գալու միակ և ճիշտ ելքը ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին միավորելն է:[62]

Ի հիշատակ Սումգայիթի զոհերի, մարտի 6-ին կազմակերպվում է սգո հանրահավաք: Ելույթ են ունենում Համլետ Գրիգորյանը, Էդուարդ Ղազարյանը, Հրաչյա Բեգլարյանը, Ղարմետաքսկոմբինատից Վարյա Բադասյանը: Հեռագրեր են ուղարկվում Մ. Գորբաչովին, Վազգեն Առաջինին և Կարմիր խաչի ու Կարմիր մահիկի միջազգային կոմիտեների հասցեներով: Ծաղկեպսակներ դրվեցին Սումգայիթում զոհվածների հուշարձանին, որը կանգնեցվել էր այդ օրերին: Ապա «Կռունկ»-ի նախաձեռնությամբ մարտի 8-ին տեղի է ունենում հանրահավաք: Քանի որ Ստեփանակերտի կենտրոնական հրապարակը շրջափակված էր զինվորներով, ուստի հանրահավաքը տեղի է ունենում Ստեփանակերտի քաղաքային հուշահամալիրի տարածքում՝ Փառքի թանգարանի մոտ: Ելույթ ունեցան Սվետլանա Պետրոսյանը (Ղարմետաքսկոմբինատից), բանաստեղծ Գուրգեն Գաբրիելյանը, Նադյա Բաղդասարյանը (քաղաքի բնակչուհի), Արզիկ Մխիթարյանը (դասախոս), Ռիմա Քոչարյանը (ջուլհակուհի), սումգայիթցի մի փախստական կին և ուրիշներ, որոնք անարգանքի սյունին գամեցին «սումգայիթ» կազմակերպողներին ու պահանջեցին բոլոր հանցագործներին դատական պատասխանատվության ենթարկել:

«Կռունկ»-ը սերտորեն համագործակցում էր ԼՂԻՄ կուսմարզկոմի և մարզխորհրդի հետ և ջանում համատեղ ուժերով մարզում վերականգնել աշխատանքային ռիթմն ու ապահովել բնակչության անվտանգությունը:

Մարտի 8-ին «Կռունկ»-ի խորհուրդը որոշեց նոր պատվիրակություն ուղարկել Մոսկվա:[63] Պատվիրակությունը Մոսկվա հասավ մարտի 11-ին: Նրանց ընդունեց ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Ե. Լիգաչովը, որը «սումգայիթը» բնորոշեց որպես խուլիգանների արարք և հայտնեց, թե

---

62. նույնը, էջ 48-49

63. Պատվիրակության կազմը՝ Ղարմետաքսկոմբինատի կուսկազմակերպության քարտուղար Ռոբերտ Քոչարյան (ղեկավար), Ստեփանակերտի ավտոտրանսպորտային ձեռնարկության 2718 ավտոշարասյան պետ Մաքսիմ Միրզոյան, սոցիալիստական աշխատանքի հերոս Քնարիկ Առաքելյան, կուսմարզկոմի բյուրոյի անդամ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, ջուլհակուհի Սահդա Օրբելյան, մարզխորհրդի պատգամավոր, բանվորուհի Տատյանա Սոբոլևա, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսանող Սերգեյ Շահվերդյան և Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն, ԽՍՀՄ ժողովրդական ուսուցիչ Իվան Աթայան:

ԽՄԿԿ Կենտկոմը տարածքային փոփոխություններ չի նախատեսում, սակայն ձեռնարկում է միջոցներ Ղարաբաղի տնտեսական վիճակը բարելավելու համար: Արցախի պատվիրակությանն ընդունեց նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, ԽՄԿԿ ԿԿ անդամության թեկնածու, Մ. Գորբաչովի մերձավոր շրջապատում գտնվող Ե. Պրիմակովը, որը խոստացավ նպաստել Ղարաբաղի հարցի լուծմանը: Պատվիրակությունը Մոսկվայից վերադարձավ հիասթափված: «Կռունկ»-ի խորհուրդը, լսելով պատվիրակության ղեկավարի հաղորդումը, հանգեց այն եզրակացության, որ պետք է ամրապնդել սեփական ուժերը և հույսեր չկապել Մոսկվայի հետ: Դրան հակառակ՝ մարզի ղեկավարությունը կուրորեն հավատում էր, որ ԽՄԿԿ Կենտկոմն իբր «խորն ըմբռնումով է վերաբերվում ինքնավար մարզում կուտակված ոչ քիչ թերություններին ու դժվարություններին», և որ այն ԼՂԻՄ-ի հիմնախնդրի վերաբերյալ «հատուկ հանձնարարություններ է տվել և անմիջականորեն կհետևի դրանց իրականացմանը»: Մարզի ղեկավարությունը բնակչությանը կոչ էր անում «պահպանել հանգստություն և զսպվածություն, սթափ գնահատել ստեղծված իրավիճակը, որը կարող է հասցնել լուրջ բարդությունների, անկանխատեսելի հետևանքների»:[64]

«Կռունկ»-ի խորհուրդը մարզային իշխանություններից պահանջում էր աներկբա կանգնել ժողովրդական պայքարի գլուխ և բոլոր ջանքերը գործադրել մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշումն իրագործելու համար: «Կռունկ»-ը նաև գտնում էր, որ մարզային իշխանությունները ոչ մի հարցում չպետք է ենթարկվեն Ադրբեջանի իշխանություններին ու կատարեն նրանց պահանջները: 1988-ի մարտյան այդ օրերին «Կռունկ»-ի խորհուրդը հրապարակում է «Ղարաբաղի հերոսական ժողովրդին» կոչը, որում նշված է, որ Հայաստանի հետ վերամիավորվելու համար արցախահայության պայքարը հասել է վճռական պահի, և որ կենտրոնական իշխանությունները փորձում են երկրամասի բնակչության աչքերը փակել մարզի տնտեսական զարգացման ինչ-որ պլանով: Խորհուրդը մարզի բնակչությանը կոչ էր անում պայքարում ցուցաբերել «համբերություն, խելամտություն և յուրաքանչյուր քայլի, յուրաքանչյուր բառի հավասարակշռություն, հոգեպես չընկճվել, մինչև վերջ կանգնել», քանի որ միայն «ժողովրդի միասնությունն ու համախմբվածությունը մեզ կհասցնի հաղթանակի: Դեմոկրատիան, վերակառուցումը և հրապարակայնությունը քննություն են հանձնում Ղարա-

64. «Սովետական Ղարաբաղ», 02.03.1988

բաղում: Մեր գործն արդար է, մենք կհաղթենք»:[65]

Ադրկոմկուսի Կենտկոմի քարտուղար Թ. Օրուջևը, Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ և պետպլանի նախագահ Ա. Մութալիբովը, ինչպես և մի շարք այլ պաշտոնյաներ, մարտի 9-ին ժամանելով Ստեփանակերտ, փորձեցին մարզի սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ հանրապետության համապատասխան մարմինների կազմած պլանը փաթաթել արցախցիների վզին, սակայն այն մերժվեց «Կռունկ»-ի ակտիվ մասնակցությամբ: Այդ նույն հարցով Թ. Օրուջևը կրկին Ստեփանակերտ եկավ մարտի 11-ին, այս անգամ ԽՄԿԿ Կենտկոմի սեկտորի վարիչ Վ. Մաքսիմովի հետ: Մոսկվայից ժամանել էր նաև ԽՄԿԿ Կենտկոմի պատասխանատու աշխատող Լ. Շիշովը: ԼՂԻՄ կուսմարզկոմի բյուրոն, նրանց մասնակցությամբ քննարկելով «ԼՂԻՄ սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ առաջարկու-թյունների մասին» հարցը, մերժում է այն: Դրանում էական դեր է խաղացել «Կռունկ»-ի խորհուրդը: Մարտի 16-ին կրկին Ստեփանակերտ է ժամանում ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի, ԽՍՀՄ պետպլանի և մի շարք այլ նախարարությունների ու գերտեսչությունների պատասխանատու աշխատողներից կազմված մի խումբ, որի նպատակն էր կուսակցության ԼՂԻՄ մարզկոմի բյուրոյին և մարզխորհրդի գործկոմին ծանոթացնել ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի և ԽՄԿԿ Կենտկոմի պատրաստած՝ ԼՂԻՄ սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ որոշման նախագծի հետ: Մարզկոմի բյուրոն և մարզգործկոմը, ծանոթանալով այդ պլանին, հայտարարում են, թե արցախահայությունը պահանջում է նախ և առաջ վճռել մարզը Հայկական ԽՍՀ հետ վերամիավորելու հարցը, որից հետո միայն խոսել երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացման հարցի շուրջ: «Կռունկ»-ի խորհրդի կոչով մարզկենտրոնի ակտիվը, հավաքվելով Լենինի անվան հրապարակում, կուսմարզկոմից և մարզխորհրդից պահանջում է մերժել ներկայացված պլանը: Դրական պատասխան չստանալով, հանձնաժողովը հաջորդ օրը մեկնում է Լեռնային Ղարաբաղից: Մի քանի օր անց ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի սոցիալական հարցերի գծով բյուրոյի նախագահի առաջին տեղակալ Վ. Լախտինը, պատասխանելով «Իզվեստիա» թերթի թղթակցի հարցին, չի թաքցնում, որ ԼՂԻՄ-ի բնակչությանն ավելի շատ հետաքրքրում է մարզի կարգավիճակի փոփոխման, քան տնտեսական զարգացման հարցերը:

- 1988-ի մարտյան այդ օրերին,- հետո ինձ կպատմի «Կռունկ»-ի

65. Կոչի պատճենը՝ հեղինակի անձնական արխիվ

խորհրդի նախագահի տեղակալ Վարդան Հակոբյանը,- մեր խորհուրդն աշխատում էր խիստ ծանրաբեռնված, օր ու գիշեր, առանց հանգստի: Մեր հիմնական խնդիրներից էր՝ մերժել Ադրբեջանից եկող բոլոր առաջարկությունները, որովհետև դրանք հակահայկական էին: Այդ օրերին խորհրդի անդամների և հանձնաժողովների անելիքները համակարգում էինք՝ ելնելով կոնկրետ իրադարձություններից: Տարբեր հանձնարարություններով մարզի շրջաններ էինք ուղարկում «Կռունկ»-ի անդամներին, որոնք ստացած առաջադրանքները կատարում էին պատվով… Կեցցե նրանք…

«Կռունկ»-ի անդամների թիվն օր օրի աճում էր: Այն հասել էր ավելի քան 150-ի:

Այլևս հնարավոր չէր նիստերը վարել խմբագրության նկուղային հարկի դահլիճում: Քաղխորհրդի համաձայնությամբ «Կռունկ»-ի նախագահությունը տեղափոխվեց պետական թատրոնի երկրորդ հարկի աջ թևի դահլիճը: Նախագահության նիստերին հաճախ մասնակցում էին նաև ոչ անդամներ, ելույթ ունենում, առաջարկություններ մտցնում և ցանկություն հայտնում կատարել խորհրդի հանձնարարությունները:

ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ին ընդունած որոշումից անցել էր ավելի քան երկու շաբաթ, սակայն ԼՂԻՄ կուսմարզկոմը դեռևս չէր ասել իր վճռական խոսքը, մինչդեռ մարզի բնակչությունը նրանից պահանջում էր վճռականություն դրսևորել և առանց երկմտանքի հանդես գալ մարզի բնակչության շահերի պաշտպանությամբ: Փետրվարի վերջին և մարտի սկզբին կուսակցական սկզբնական կազմակերպություններում ստորագրություններ էին հավաքվում՝ պահանջելով հրավիրել մարզային կուսակցական կազմակերպությունների արտահերթ պլենում կամ կոնֆերանս և քննարկել Արցախի հիմնահարցը: Մարզի 285 կուսակցական սկզբնական կազմակերպություններից հավաքվում է 7260 ստորագրություն և ներկայացվում մարզկոմ:[66]

Մարզկոմը հապաղում էր հրավիրել պլենում: Պլենում հրավիրելու հարցում «Կռունկ»-ը խիստ վճռական էր, որի կոչով մարզի աշխատավորները մարտի 15-ին դիմում են համընդհանուր գործադուլի: Մարտի 17-ին հրավիրվում է կուսակցության մարզկոմի պլենում, որի աշխատանքներին մասնակցում են ԽՄԿԿ Կենտկոմի կուսակցական-կազմակերպչական աշխատաքների բաժնի վարիչի տեղակալ Գ. Խարչենկոն, Կենտկոմի պատասխանատու աշխատող Ի. Շվեցը և Ադրկոմկուսի կենտկոմից՝ Թ. Օրուջևը: Պլենումը քննարկում է «Ադրբեջանի և Հա-

66. Арутюнян В. Б., նշվ. աշխ., էջ 76

յաստանի ժողովուրդներին ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովի հղած դիմումից բխող Լեռնային Ղարաբաղի մարզային կուսակցական խնդիրների մասին» և «ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին միացնելու հարցի վերաբերյալ իքնավար մարզի աշխատավորների, կոմունիստների պահանջի մասին» հարցերը: Երկրորդ հարցի վերաբերյալ ընդունված որոշման մեջ ասված է. «Հաշվի առնելով ինքնավար մարզի հայ բնակչության իղձերը, Լեռնային Ղարաբաղի ճնշող մեծամասնության կամքը՝ խնդրել ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյին՝ քննարկել և դրականորեն լուծել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ-ին միացնելու հարցը՝ դրանով իսկ ուղղելով 20-ական թվականների սկզբներին Լեռնային Ղարաբաղի տարածքային պատկանելությունը որոշելու ժամանակ թույլ տրված պատմական սխալը»:[67]

Մարզկոմի պլենումի մասնակիցները գիշերվա ժամը 3:00-ին միանում են Լենինի անվան հրապարակում անհամբեր սպասող տասնյակ հազարավոր ցուցարարներին: «Կռունկ»-ի խորհրդի նախագահ Արկադի Մանուչարովը ժողովրդի անունից շնորհակալություն է հայտնում մարզկոմի պլենումի անդամներին և հույս հայտնում, որ Արցախ-Ղարաբաղն ընդմիշտ կլինի մայր հայրենիքի հետ: Հենց այդ նույն գիշեր հրավիրված «Կռունկ»-ի խորհրդի նիստը որոշում է մարզի բոլոր բնակավայրերում անցկացնել հանրահավաքներ և հեռագրերով ու նամակներով «հեղեղել» Կրեմլը:[68]

Մարտյան այդ օրերին երկրի կենտրոնական թերթերը՝ «Պրավդա», «Իզվեստիա», «Տրուդ» և այլն, արցախյան իրադարձությունների վերաբերյալ հոդվածներ են տպագրում, որոնցից, իրոք, գարշահոտություն էր փչում: Մարտի 21-ի «Պրավդայի» համարում տպագրված «Հույզեր և բանականություն» սադրիչ հոդվածը համոզում է, որ այդ հորինվածքի հեղինակները գտնվում էին պատրանքների մեջ: Փորձելով պարզել, թե ինչ է տեղի ունենում Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը, նրանք եզրակացնում են, որ արցախյան պայքարի մասնակիցների մոտ իբր «տեղական շահերը գերադասվել են պետականից»: Խոսելով սումգայիթյան ոճրագործության մասին՝ հեղինակներն անամոթաբար գրում են. «Օգտվելով պայթունալի իրադրությունից՝ քրեական տարրերը կողոպուտի նպատակով ներխուժել են որոշ բնակարաններ, ուր հայեր էին ապրում: Օրինազանցությունը, բռնությունը, ծաղրուծա-

67. «Սովետական Ղարաբաղ», 18.03.1988
68. Աբրահամյան Հրանտ, Մարտնչող Արցախը, գիրք Գ., էջ 74-75

նակը մարդկանց նկատմամբ այդ բազմազգ քաղաքում հեռուն են գնացել»: Հետո եզրակացնում են, թե այդ ամենն իբր չեն կարող «սասանել ադրբեջանական և հայ ժողովուրդների բարկամությունը»: Եվ դա «Պրավդայի» էջերում, այն թերթի, որը պարտավոր էր լինել անաղարտ, ճշմարտախոս ու արդարամիտ: «Կռունկ»-ի անդամներ Արկադի Մանուչարովը, Վարդան Հակոբյանը, Էդուարդ Ղազարյանը, Ժաննա Գալստյանը, Հրաչյա Բեգլարյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Բենիկ Օվչյանը, Ռոլես Աղաջանյանը, Համլետ Գրիգորյանը, Արմեն Հակոբյանը, Գրիգոր Աֆանասյանը, Շուրա Հակոբյանը, Իշխան Ավետիսյանը և ուրիշներ իրենց հրապարակային ելույթներում և բնակչության հետ ունեցած հանդիպումների ժամանակ հերքում էին կենտրոնական մամուլի այդ սուտ և կեղծ տվյալներն ու բնակչությանը կոչ անում ամուր մնալ իրենց դիրքերում, պայքարել մինչև վերջ: Ի պատասխան կենտրոնական մամուլի այդ սադրանքի, մարտի 23-ին մարզում հայտարարվում է համընդհանուր գործադուլ: Այն շարունակվում է մինչև ապրիլի 5-ը: «Կռունկ»-ը փորձեց կանխել գործադուլը, սակայն չհաջողվեց: ԼՂԻՄ կուսմարզկոմի բյուրոն, քննարկելով «Հույզեր և բանականություն» հոդվածը, հիմնավորված և մերկացնող պատասխան ուղարկեց խմբագրություն: Անշուշտ, գործադուլը պայքարի ձև է, որին հաճախ էին դիմում արցախցիները: Ի դեպ, Ադրբեջանի իշխանությունների հաշվարկով՝ 1988-1989թթ. ԼՂԻՄ-ում տեղի է ունեցել 10 գործադուլ, որոնց հետևանքով մարզի տնտեսությունը կրել է մոտ 67 մլն ռուբլու վնաս:[69]

1988թ. մարտի 24-ին ԽՄԿԿ Կենտկոմը և ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդն ընդունեցին «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը 1988-1995թթ. արագացնելու միջոցառումների մասին» որոշումը: Այդ նպատակի համար հատկացվում էր 400մլն ռուբլի, որը պետք է իրացվեր Ադրբեջանի իշխանությունների կողմից: Անկասկած, այդ պլանը կազմվել է Բաքվում՝ Արցախի հիմնահարցը իսպառ օրակարգից հանելու նպատակով: Բնականաբար, արցախահայությունը կտրուկ մերժեց այդ որոշումը: Որոշումն ընդունելուց տաս տարի անց՝ այն ժամանակ կուսմարզկոմի բյուրոյի անդամ Վլադիմիր Թովմասյանը «ԼՂ Հանրապետություն» թերթին տված հարցազրույցում նշել է, որ այդ որոշման հիմնական նպատակն էր Լեռնային Ղարաբաղի հանրությանը շեղել քաղաքական պայքարի ճանապարհից: Վերևներում կարծում էին, թե արցախահայության խռովքի գլխավոր պատճառը սոցիալ-տնտեսական խնդիրներն էին:

69. Хроника НКАО, февраль 1988-февраль 1990, Баку, 1990.

Որոշումը, որի նախագիծը պատրաստվել էր Բաքվում, մեծամասամբ պետք է ծառայեր մարզի տարածքում ադրբեջանական բնակավայրերի զարգացմանը: Արցախում որոշումը քննարկելու ժամանակ ուղղակի ասվեց, որ մերժում են,որովհետև այդ միլիոնները պետք է տրվեն Ղարաբաղին, այլ ոչ թե Բաքվին:[70] Որշմանը դեմ էր նաև «Կռունկ»-ը: Խորհրդի անդամները թե իշխանություններին և թե բնակչությանը կոչ էին անում այն մերժել:

70. «ԼՂ Հանրապետություն», 28.03.19

Ընդհատակում

1988թ. մարտի 24-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի որոշմամբ արգելվեց «Ղարաբաղ» կոմիտեն: Նույն օրն Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդը նույնպես ընդունեց որոշում, որով արգելվեց «Կռունկ»-ը: Այսպիսով, Մոսկվայից թելադրված նույն սցենարով միաժամանակ արգելվեցին «Ղարաբաղ» կոմիտեն և «Կռունկի» խորհուրդը: Թե «Ղարաբաղ» կոմիտեն և թե «Կռունկ»-ի խորհուրդը որոշեցին անցնել ընդհատակ:

«Ղարաբաղ» կոմիտեի և «Կռունկ»-ի խորհրդի արգելումը լայն բողոք առաջ բերեց ոչ միայն Հայաստանում և Արցախում, այլև Միության ողջ տարածքում ու սփյուռքահայության շրջանում: Հրապարակախոս Հ. Բորովիկի հետ Երևանում մարտի 28-ին ունեցած հանդիպման ժամանակ Սիլվա Կապուտիկյանը հայ ժողովրդի անունից խիստ անհագստություն հայտնեց «Ղարաբաղ» կոմիտեի և «Կռունկ»-ի գործունեությունն արգելելու կապակցությամբ: «Վերջերս,- այսպես ավարտեց իր խոսքը հայ մեծ բանաստեղծուհին,- վերացվեց Ղարաբաղի հարցը տնօրինող մեր հանրապետական կոմիտեն, և պարզ է, որ կոմիտեականները դեռևս հնարավորություն կունենան ազատ և հանգիստ շարունակելու իրենց առօրյա գործն ու կյանքը: Իսկ ի՞նչ պիտի կատարվի Ղարաբաղի այդ նույն կոմիտեի անդամների հետ: Մենք չենք մոռացել այնտեղ տասնամյակների մոլեգնած շովինիզմի ու բռնությունների դեպքերը...»:[71] Իսկ Արկադի Մանուչարովը 1990թ. փետրվարի 16-ին Մոսկվայի Բուտիրյան բանտում հայտարարել է. «Իմ և իմ գլխավորած «Կռունկ» կոմիտեի գործունեությունը կրում էր խաղաղ ու սահմանադրական բնույթ և իմ ժողովրդի նկատմամբ սադրանքի ոչ մի առիթ չի տվել»:[72]

Այդ իրադարձություններից մի քանի օր առաջ, 1988թ. մարտի 21-ին, Մ. Գորբաչովին ուղղված նամակում Ա. Սախարովն անհանգստություն է հայտնել Լեռնային Ղարաբաղում տիրող իրավիճակի կապակցությամբ, որը Ադրբեջանին բռնակցվելուց հետո դարձել էր «ազգամիջյան բախումների մշտական աղբյուր», որտեղ «տեղ են գտել ազգային խտրականության թելադրանքի, հայկական մշակույթի սահմանափակման բազմաթիվ փաստեր»:[73] Անվանի գիտնականը և իրավա-

71. Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997, էջ 61
72. Ղարաբաղյան հարց, Ստեփանակերտ, 1991, էջ150:
73. Андрей Сохаров о Нагорном Карабахе, Ереван, 1996, ст.5:

պաշտպանը, իր նամակում բացատրելով խորհրդային բարձրագույն մարմինների կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հակասահմանադրական և վարկաբեկիչ գործողությունները, շարունակել է. «Խորհրդային իշխանության մարմնի միջնորդության նորմալ, սահմանադրորեն քննարկման փոխարեն սկսվեցին գերազանցապես հայերին ուղղված խուսանավումներն ու հորդորները, միաժամանակ մամուլում ու հեռուստատեսությամբ ի հայտ եկան հաղորդագրություններ, որոնցում իրադարձությունները շարադրված էին ոչ լրիվ, միակողմանի, իսկ հայ բնակչության օրինական խնդրանքներն սկսեցին հայտարարվել որպես ծայրահեղական, և կարծես թե նախօրոք կանխորոշված էր բացասական պատասխանը»:[74]

«Կռունկ»-ի անդամներից ոմանք այն կարծիքն են հայտնել, թե կազմակերպությունը, անցնելով ընդհատակ, իրեն վերանվանել է «Տնօրենների խորհուրդ»: Սերգեյ Խաչատրյանը պատմում է, որ կազմակերպությունն արգելվելուց հետո մի շաբթից ավել հավաքվում էին երաժշտական ուսումնարանի շենքում: Սակայն այստեղ ևս նրանց հանգիստ չէին տալիս: Ստիպված անցնում են ընդհատակ և օգնում ձեռնարկությունների «Տնօրենների խորհրդին»:[75]

Իրականում այսպես է եղել. Տնօրենների խորհուրդը ստեղծվել էր խորհրդային տարիներին, գործում էր խորհրդային օրենքներով դեռևս ութսունական թվականների սկզբից: Այդ վերջին տարիներին Տնօրենների խորհրդի գործունեությունը խիստ թուլացել էր: 1988-ի փետրվարյան-մարտյան օրերին խորհրդի աշխատանքներում նկատվում էր որոշակի աշխուժություն: Տնօրենների խորհրդի մեջ մտնում էին Ստեփանակերտի արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարները: Այն ղեկավարում էր Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի տնօրեն Բորիս Առուշանյանը: «Կռունկ»-ը, անցնելով ընդհատակ, միակ ելքը Տնօրենների խորհրդի հետ միանալու մեջ էր տեսնում, որովհետև վերջինս գործում էր լեգալ և առանց արգելքի: Թե Տնօրենների խորհուրդը և թե «Կռունկ»-ը կազմեցին մի միասնություն և պայքարում էին միևնույն նպատակների ու ձգտումների իրականացման համար:[76]

1988-ի մարտի 28-ին տեղի է ունեցել «Կռունկ»-ի խորհրդի վերջին նիստը, որտեղ լսվել է հաղորդում խորհրդի գործունեության մասին:

---

74. Նույնը
75. Խաչատրյան Ս., նշվ. աշխ., էջ 251
76. «Ազատ Արցախ», 14 և 18.03.2004

Տարված աշխատանքները գնահատվեցին դրական և որոշվեց աշխատել Տնօրենների խորհրդի հետ միասին:

…1998թ. օգոստոսի 8-ին հանդիպեցի Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկայի տնօրեն Էռնեստ Հայրապետյանի հետ: 1989 թվականից նա էր ղեկավարում Տնօրենների խորհուրդը, որն իր գոյությունը պահպանում էր ձևականորեն: Ես նրան ասացի, որ մինչև իր հետ հանդիպելը՝ Համլետ Գրիգորյանը և Ռաֆայել Գաբրիելյանն ինձ պատմել են, որ «Կռունկ»-ն արգելվելուց հետո մարզում ժողովրդական շարժման գլուխ էր կանգնել Տնօրենների խորհուրդը: Նրան խնդրեցի պատմել այդ մասին: Նա հանգիստ պատասխանեց, որ պայքարի այդ օրերին Արկադի Մանուչարովի առաջարկությամբ վերակենդանացվեց Տնօրենների խորհրուդը: «Կռունկ»-ն արգելվելուց հետո, ասաց նա, համատեղ հավաքվում էինք և քննարկում ստեղծված իրավիճակից դուրս գալու պայմանները: Քանի որ Լենինի անվան հրապարակը շրջապատված էր ոստիկանության կողմից, հանրահավաքներն անց էինք կացնում արևելյան կողմից քաղաքի մուտքի մոտ գտնվող Հաղթանակի հրապարակում: Այդ հանրահավաքներում ելույթ էին ունենում «Կռունկ»-ի խորհրդի անդամները, այլ մտավորականներ, ակտիվ բանվորներ, որոնք բնակչությանը ոգևորում էին և կոչ անում պայքարը շարունակել համառորեն: Ամեն օր հանրահավաքից հետո երթ էինք կազմակերպում. հրապարակից շարժվում էինք դեպի քաղաքի կենտրոն՝ տանելով կարգախոսներ և կոչեր, որոնցում վստահություն էր արտահայտվում կուսակցության, ժողովուրդների բարեկամության, ինտերնացիոնալիզմի նկատմամբ: Այդ գործողությունների ժամանակ բավականին ակտիվ էր Տնօրենների խորհուրդը և նրա հետ գործող «Կռունկ»-ը: Փողոցային երթերի ժամանակ Տնօրենների խորհրդի անդամները գլխավորում էին իրենց տնօրինած ձեռնարկությունների կոլեկտիվները: Այդ էլ ասեմ, որ Տնօրենների խորհրդի գործունեությունը վերսկսելու մասին տեղյակ պահեցինք մարզի ղեկավարությանը, որը շատ լավ գիտեր, որ «Կռունկ»-ը գործում է մեզ հետ միասին: Առաջին հավաքի ժամանակ, որը տեղի է ունեցել մարտի վերջին օրերին, Արկադի Մանուչարովն առաջարկեց, որպեսզի Տնօրենների խորհուրդն իր վրա վերցնի շարժման հետագա ղեկավարումը, բացատրելով, որ դրանում մեծ դեր են ունենալու «Կռունկ»-ի անդամները: Ադ առաջարկությունն ընդունվեց միաձայն: Տնօրենների խորհրդի նախագահ վերահաստատվեց Բորիս Առուշանյանը, տեղակալ՝ կաթի գործարանի տնօրեն Արմո Ծատուրյանը: «Կռունկ»-ի խորհրդի բոլոր անդամները կարող էին մասնակցել Տնօրենների խորհրդի նիստերին, հանդես գալ

ելույթներով և առաջարկություններով: «Կռունկ»-ի անդամների անունները Տնօրենների խորհրդի անդամների ցուցակի մեջ չէինք մտցնում՝ նրանց կյանքը վտանգի չենթարկելու համար:

Այս հանդիպման ժամանակ «Կռունկ»-ի խորհրդի անդամ Համլետ Գրիգորյանը հիշեց.

- 1988թ. մարտի 28-ին, երբ տեղի ունեցավ «Կռունկ»-ի խորհրդի վերջին նիստը, ներկա էր նաև «Իզվեստիա» թերթի թղթակից Պ. Գուտինոտովը: Նա խորհրդի անդամներին առաջարկեց մարզում ստեղծված իրավիճակի մասին գրել իրենց կարծիքները, խոստանալով նույնությամբ, առանց փոփոխելու, տպագրել թերթում: Հաջորդ օրը, պայմանավորված ժամին, «Կռունկ»-ի անդամներից միայն ես գնացի հյուրանոց ու թղթակցին հանձնեցի հետևյալ տեքստը. «Այս տողերը ես գրում եմ ոչ թե վիրավորված, որն ինձ հասցրել է ձեր թերթը՝ ինձ անվանելով ծայրահեղական: Եվ, ընդհանրապես, շատ զգույշ գործածեցեք «ծայրահեղական», «ազգայնական» և «բախտախնդիր» արտահայտությունները:

Դիմում եմ իմ գործընկերներին, ծնողներին, ուսանողներին և սովորողներին: Բաց թողնված յուրաքանչյուր դասաժամ, անշուշտ յուրաքանչյուր ընտանիքի բերում է բարոյական վնաս:

Այսօրվա դրությամբ մնում է ղարաբաղցիների կողմից առաջ քաշված հիմնախնդիրը, մնում են նաև մեր կառավարության կողմից հատկացված միլիոնները: Ձեր ճիշտ որոշումը՝ գնալ դասի, անկասկած, կարագացնի այդ խնդրի լուծումը»: Իմ այս գրածը նույնությամբ տպագրվել է «Իզվեստիա» թերթի մարտի 30-ի համարում:

Խոսելով «Կռունկ»-ի պատմական նշանակության, նրա կատարած ազգանպաստ գործունեության մասին, հիրավի, հետաքրքիր գնահատականներ կան:

- 1988թ. փետրվարյան իրադարձությունների օրերին,- նշել է Ռազմիկ Պետրոսյանը,- ծառացավ քաղաքական որևէ կազմակերպություն ունենալու անհրաժեշտությունը, որը կարողանար իր ետևից տանել ժողովրդին, ցույցերին և հանրահավաքներին հաղորդեր կազմակերպված բնույթ, հստակ որոշարկեր մոտակա և հետագա անելիքները, այսինքն՝ շարժման մարտավարական ու ռազմավարական խնդիրները… Արցախում անցկացված բոլոր ցույցերի և հանրահավաքների կազմակերպիչը «Կռունկ»-ն էր, որի անունից նամակներ ու հեռագրեր էին ուղարկվում Խորհրդային Միության բարձրագույն կուսակցական և պետական մարմինների հասցեներով: Անհրաժեշտ եմ համարում ասել, որ մեզնից շատերը քաջ գիտակցում էինք համազգային այդ պոռթկման

տրամաբանական ավարտը, որ անխուսափելի է ռազմական բախումը: Այդ ժամանակ օրվա անհետաձգելի խնդիրը զենքի հայթայթումն էր: Զենք տեղափոխելու ծանր ու դժվարին գործն իրենց վրա էին վերցրել մեր պայքարի նվիրյալները, որոնք մշտապես վտանգի էին ենթարկում իրենց կյանքը՝ մի հրացան կամ ինքնաձիգ տեղ հասցնելու համար: Ես չեմ կարող չհիշատակել Վիգեն Գրիգորյանի (Հադրութ), Սլավա Առուշանյանի (Ասկերան), Աշոտ Ղուլյանի (Ստեփանակերտ) անունները… «Կռունկ»-ի շուրջը համախմբվել էին Արցախի հեղինակավոր մտավորականները, իսկ ողջ ժողովուրդը կարծես մի բռունցք էր դարձել: Պայքարն ընթանում էր միասնական ճակատով, ազգային անկախության շարժման խնդիրների հստակ գիտակցումով: Սումգայիթյան ողբերգությունից հետո անցանք գործնական քայլերի… «Կռունկ»-ը հռչակեց մաքսիմում և մինիմում ծրագրեր, պատվով կատարեց իր բաժին առաքելությունը: «Կռունկ»-ի հետ հանդիպելու նպատակով Արցախ ժամանեց մեծ գիտնական, մարդու իրավունքների հանրահայտ պաշտպան և հայ ժողովրդի բարեկամ Անդրեյ Սախարովը, կնոջ՝ Ելենա Բոնների ու Գալինա Ստարովոյտովայի հետ: Նրանք եկան ունկնդրելու արցախցու հոգու ճիչը, եկան հաղորդակից լինելու մեր ծանրաքաշ կյանքին, իղձերին ու ձգտումներին:[77]

- Իմ կարծիքով, ասել է Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկայի տնօրեն Էռնեստ Հայրապետյանը,- «Կռունկ»-ի անհրաժեշտությունը զգացվում էր նախ և առաջ իշխանությունների և նրան հակադրվող ժողովրդի միջև օրինական կապ ստեղծելու առումով: Եվ պատահական չէ, որ «Կռունկ»-ի խորհրդի մշակած ծրագիրն անմիջապես ներկայացվել է իշխանություններին՝ ի գիտություն, վերջինիս կողմից «Կռունկը»-ը ժողովրդի ներկայացուցչական մարմին ճանաչելու մտադրությամբ: Միանգամայն հասկանալի էր Ադրբեջանի Գերագույն խորհրդի ռեակցիան ու պատասխան քայլը: Նրա որոշմամբ արդեն մեկ ամիս անց անօրեն համարվեց կազմակերպության գոյությունը: Չի կարելի մոռացության մատնել «Կռունկ»-ի հիմնադրումից հետո չգրված մի օրենք մտցնելու փաստը. խորհրդի անդամներից ոչ մեկը չպետք է թողնի հիմնական աշխատատեղը կամ պաշտոնը, որպեսզի չկորցվի ժողովրդի վստահությունն իր առաջնորդների հանդեպ: Եվ ճիշտ էր նման ռազմավարությունը… Հիրավի, մեծ ծառայություն մատուցեց «Կռունկ»-ը նույն այդ Տնօրենների խորհրդին, որը, ի վերջո, անցկացրեց հանրաքվե, հրավիրեց միջազգային դիտորդներ ու վերջնական

77. «ԼՂ Հանրապետություն», N 98, 31.07.1996

նվաճումը եղավ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը:[78]

- 70-ամյա լռությունից հետո,- ասաց Համլետ Գրիգորյանը,- արցախահայությունը բարձրաձայն հայտարարեց իր կամքը և քաղաքական կազմակերպություն ստեղծելով՝ փաստորեն դրեց ժողովրդավարական ընտրությունների սկիզբը: Կարելի է ասել, որ «Կռունկ»-ը հանդիսացել է ապագա ղարաբաղյան իշխանությունների, այսպես ասած, սաղմը: Իր իրավունքների համար պայքարող գիտակից ժողովուրդը չպետք է ամբոխի տպավորություն թողնի, այստեղ-այնտեղ խմբերով հավաքվի հարցեր քննարկելու, այլ պարտավոր է պատշաճ հունով տանել քաղաքական գործունեությունը: «Կռունկ»-ն ի հայտ գալու հետ մեկտեղ իշխանությունների մոտ ծագեց այն ցրելու որոշումը, որը շատ թե քիչ իրականացրեց Լեռնային Ղարաբաղի Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Արկադի Վոլսկին: Նա չկարողացավ լուրջ պառակտում մտցնել կազմակերպության շարքերում, սակայն ոմանց պաշտոններով սիրաշահելու նրա պրակտիկան իր բացասական հետևանքները թողեց: Անկարելի է չգնահատել այն մեծածավալ աշխատանքը, որ կատարվեց կազմակերպության կողմից: «Կռունկ»-ի անդամներն էն գլխից երդվել էին ազնվորեն ծառայել Շարժման գաղափարներին, և պետք է նշել, որ մեծամասնության մոտ այդ երդումը պահպանվեց մինչև վերջ… «Կռունկ»-ը փոխեց անունը, բայց էությունը մնաց նույնը: Այդ օրերին արցախցիները նորից հանդես բերեցին նախանձելի միաբանություն, ոչ մի կապանք ի զորու չեղավ արգելելու ոգու կռիվը… «Կռունկի» քաղաքական ծրագիրը չի պարտվել…[79]

Այդ համատեղ խորհուրդը, նախ, նպաստեց, որպեսզի բնակչությունը դադարեցնի գործադուլը, ապա՝ Հայոց ցեղասպանության օրն առաջին անգամ Արցախում կազմակերպեց համաժողովրդական ցույց, որի համար «Կռունկ»-ի մի շարք անդամներ ենթարկվեցին հալածանքների:

Մարտի վերջերին կարճատև ժամկետով Մոսկվա մեկնեց Շարժման ղեկավարներից կազմված մի նոր պատվիրակություն՝ Արկադի Մանուչարովի գլխավորությամբ: Պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների հետ և խնդրեց ընթացք տալ Ղարաբաղից ստացվող նամակ-բողոքներին ու դրականորեն լուծել Ղարաբաղի հիմնահարցը:[80]

---

78. Նույնը
79. Նույնը
80. Նույնը

1988թ. մայիսին ազգամիջյան հարաբերությունները սրվեցին, մանավանդ, Շուշի քաղաքում: Այստեղ ադրբեջանցիները սպառնում էին հաշվեհարդար տեսնել քաղաքի հայ բնակչության հետ, ինչպես դա արվել էր 1920թ. մարտ ամսին: Նրանք այն աստիճան էին սանձարձակ դարձել, որ հանրապետության իշխանություններից պահանջում էին լուծարել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը: Մայիսի 16-ից սկսած՝ երեք օրվա ընթացքում քաղաքի հայ բնակչության մեծամասնությունը վտարվեց քաղաքից: Արդեն նույն թվականի սեպտեմբերի վերջի դրությամբ քաղաքում ոչ մի հայ չէր մնացել: «Կռունկ»-Տնօրենների խորհուրդը հնարավոր բոլոր միջոցներով օգնում էր բռնագաղթածներին՝ նրանց տեղավորելով Ստեփանակերտի հանրակացարաններում, հյուրանոցներում, հարևան գյուղերում, նրանց համար ծեռք բերում հագուստեղեն, սննդամթերք, ապրելու այլ միջոցներ: «Կռունկ»-Տնօրենների խորհուրդը իշխանություններից պահանջում էր պատժել այդ ամենի համար մեղավորներին և վճռական միջոցներ ծեռնարկել նման երևույթների դեմ:

Արցախցիները, այնուամենայնիվ, հույս ունեին, թե Մոսկվան կընդառաջի իրենց խնդրանքին: Այդ հույսով էլ 1988թ. մայիսին կրկին Մոսկվա մեկնեց նոր պատվիրակություն Շարժման առաջամարտիկներից մեկի՝ Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս Համլետ Գրիգորյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին Լեոնիդ Մայիլյանը (Ճարտարի կոլտնտեսության նախագահ), Վաղարշակ Հայրապետյանը (Ղարաբուլաղ գյուղ, պատերազմի վետերան), Արզիկ Մխիթարյանը (Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս) և նրա ամուսին Լավրենտ Ղալայանը (նկարիչ): Պատվիրակությունը Մոսկվայում ունեցավ բազմաթիվ հանդիպումներ, սակայն չհասնելով որևէ շոշափելի արդյունքի՝ մայիսի 24-ին վերադարձավ:

Այս համատեքստում ուշագրավ է «Իզվեստիա» թերթի մի հրապարակումը 1988թ. հուլիսի 22-ի համարում («Ուր էին տանում նրանք ժողովրդին»), որի մեջ անհիմն ու անբարո վարկաբեկվել են «Կռունկ» և «Ղարաբաղ» կոմիտեները: Այդ առթիվ Մաշտոցի անվան Մատենադարանի կոլեկտիվի հուլիսի 23-ի ժողովում ընդունված բանաձևում ասված է. «Կռունկ» և «Ղարաբաղ» կոմիտեները ԼՂԻՄ-ում և ՀԽՍՀ-ում դառնալով ժողովրդի ազնիվ հույզերի իսկական արտահայտիչն ու կազմակերպիչները, հինգ ամիս շարունակ հավասարակշռված և շրջահայաց ղեկավարում են համաժողովրդական շարժումը՝ թույլ չտալով սահմանադրական որևէ դրույթի և որևէ օրենքի խախտում: Գեր-

մարդկային ջանքերով նրանց հաջողվեց թույլ չտալ պատասխան Սումգայիթ ոչ Հայաստանում, ոչ Ղարաբաղում, ոչ որևէ այլ տեղ: Այս ամենի համար նրանք համաժողովրդական գովեստի, շնորհակալության են արժանի միայն»:[81]

Մի քանի օր անց՝ հուլիսի 26-ին, ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի (ԳԱ) Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատակիցների ընդհանուր ժողովի ընդունված որոշման մեջ ասվում է. «Ղարաբաղյան համազգային-համաժողովրդական «Ղարաբաղ» և «Կռունկ» կոմիտեները ՀԽՍՀ-ում և ԼՂԻՄ-ում ծնվել են հայ ժողովրդի կամքով և դարձել նրա արդարացի պահանջի ձայնափողը: Դրանք հայրենասիրական (սակայն բնավ ոչ նացիոնալիստական) կազմակերպություններ են, վայելում են ժողովրդական զանգվածների անսահման վստահությունն ու հարգանքը, որի վկայությունն են Ստեփանակերտում, Երևանում և հանրապետության այլ վայրերում տեղի ունեցած կես միլիոնանոց միտինգները: Անցած 5-6 ամիսներին Ղարաբաղյան շարժման նշված կոմիտեների գործունեությունն ընթացել է զուտ սահմանադրական, դեմոկրատական ուղիով, երբեք չի հանդիսացել հակահիրավական, առավել ևս՝ հակախորհրդային»:[82]

1988թ. ամռանը տեղի ունեցան իրադարձություններ, որոնք անհամատեղելի էին «Կռունկ» - Տնօրենների խորհրդի էության հետ: Արկադի Մանուչարովի Բաքու մեկնելու մասին Սերգեյ Խաչատրյանի պատմածը լիովին ճիշտ է: Այդ մասին մեր վերոնշյալ հանդիպումների ժամանակ Արկադի Մանուչարովն ինքն է պատմել: Նրան Արցախում բոլորը հավատում էին: Ադրբեջանի իշխանությունները, պարզապես, մարտահրավեր էին նետել արցախցիներին:

1988-ի ամռանը Մանուչարովին կանչեցին Բաքու: Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Վեզիրովը և Մանուչարովը ժամանակին միասին սովորել էին Ֆիզուլի քաաքի Ս. Կիրովի անվան ռուսական միջնակարգ դպրցում: Այն տարիներից գիտեին իրար: Վեզիրովը, երբ 1988-ի մայիսին ընտրվեց Ադրկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, իմանալով, որ Լեռնային Ղարաբաղում ժողովրդական պայքարի գլուխ է կանգնած Մանուչարովը, մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյանի միջոցով նրան հրավիրում է Բաքու: Այդտեղ էլ Մանուչարովին խնդրում է մարզի աշխատավորներին կոչ անել վերադառնալ աշխատանքի: Ստեփանակերտ վերադառնալուց հետո

81. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ). ֆ.207, ց.44, գ.16, թ.36:
82.Նույնը. ֆ.207, ց.44, գ.19. թ.51:

Ա. Մանուչարովի տնօրինած կոմբինատում վերսկսվում են աշխատանքները: Հուլիսի 29-ին «Կռունկ»-Տնօրենների խորհուրդը էլեկտրատեխնիկական գործարանի բանվորական ակումբում հրավիրում է նիստ: Կրքերը որոշակիորեն շիկացել էին: Ռազմիկ Պետրոսյանը հավաքվածների անունից առաջարկում է, որ այդ «ընկերական դատը» վարի Վարդան Հակոբյանը: Շատ կարևոր էին հարցի օբյեկտիվ լուծումն ու հստակեցումը: Մանավանդ, որ կային նաև մարդիկ, ովքեր Մանուչարովին մեղադրում էին «ադրբեջանցիների խայծը կուլ տալու» մեջ: Իսկ Ադրբեջանի իշխանություններն ամեն կերպ ձգտում էին պառակտում մտցնել Շարժման ակտիվիստների շարքերում: Ներկաները քննարկում են Ա. Մանուչարովի վարքագիծը: Վերջինս պատմում է, որ իրեն հրավիրել է կուսմարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյանը և խնդրել գնալ Բաքու՝ հանդիպելու Վեզիրովի հետ:

Պետանվտանգության կոմիտեն երաշխավորել էր իր անվտանգությունը: Գնացել ու վերադարձել է ուղղաթիռով: Նիստը շարունակվել է մինչև կեսգիշեր, որից հետո ցրվեցին: Նրա մասնակիցների նպատակը ստեղծված իրավիճակի մեջ պարզություն մտցնելն էր, որին և հիմնականում նրանք հասան: «Դատը» վարողը հավաքը եզրափակեց միասնականության կոչով: Տողերիս հեղինակին չհաջողվեց գտնել այդ նիստի արձանագրությունը, որը կօգներ շատ բան պարզել:

-Տնօրենների խորհրդի հետ «Կռունկ»-ի միավորումը,- հետո ինձ կպատմի Արկադի Մանուչարովը,- այդ օրերին միակ ճիշտ քայլն էր:- Մենք աշխատում էինք նույն թափով: Իմ գործունեության մեջ, իրոք, եղել են նաև բացթողումներ: Օրինակ. ես չէի կարողանում ընդունել զինված պայքարի մարտավարությունը միայն նրա համար, որ շատ զոհեր կունենայինք: Բաքու էի գնացել առանց Տնօրենների խորհրդի իմացության, որը ճիշտ չէր: Անհրաժեշտ էր այդ հարցը նախօրոք, թեկուզ խիստ գաղտնի, քննարկեինք, ընդհանուր ռազմավարություն մշակեինք և նոր գնայի, իհարկե, եթե խորհուրդը դա անհրաժեշտ գտներ: Ես նույիսկ կողմնակից էի մարզին տալ ինքնավար հանրապետության վիճակ, որը չէր մտնում արցախահայության ազգային-ազատագրական պայքարի ընդհանուր ծրագրի մեջ: Այո, սա ևս շեղում էր մեր ընդհանուր սկզբունքներից: Մտադիր եմ հետո հուշեր գրել, այդ ամենի մասին այնտեղ անպայման կպատմեմ…

Հետո՝ 1988-ի նոյեմբերի 28-ին, Արկադի Մանուչարովը ձերբակալվում է Երևանում: Դա Հայկական ԽՍՀ իշխանությունների ամոթալի գործարքի արդյունքն էր:

Տնօրենների խորհրդի աշխատանքները, չնայած դանդաղ, սակայն

շարունակվել են մինչև 1991թ. վերջերը: Այդ ընթացքում «Կռունկ»-Տնօրենների խորհրդի շատ անդամներ նվիրաբար գործել են երկրամասի առաջ դրված խնդիրներն արժանվույնս լուծելու համար: Պատշաճը պետք է մատուցել նրանց, ովքեր հավատարիմ մնացին 1988-ի փետրվարյան հերոսական օրերի սկզբունքներին ու դավանանքին և մինչև հիմա էլ մաքառում են արցախահայության սուրբ պայքարը պատմական ավարտին հասցնելու համար: Այդ մարդկանց գործն ու խիզախությունը պետք է դառնան բոլոր արցախցիների սեփականությունը:

Փա՜ռք նրանց:

Երևան, 2009-2013թթ.

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Սույն աշխատանքը հերոսապատում է՝ նվիրված արցախահայության ազգային-ազատագրական պայքարի մի հատվածի: Ես միշտ էլ հպարտացել եմ իմ հայրենակիցների հերոսական սխրանքներով, որոնք համաշխարհային պատմության մեջ թողել են անջնջելի հետք: Իրոք, ինչո՞ւ չհպարտանալ, երբ հայրենի օջախը պաշտպանելու համար նրանք ոչինչ չեն խնայում, նույնիսկ իրենց կյանքը: Արցախյան պատերազմում հայ ժողովուրդը տվել է հազարավոր զոհեր: Նրանցից ամեն մեկը մի հերոս է, մի մեծություն:

Երբեք էլ այն մտքին չեմ, որ այս փոքրածավալ աշխատանքը զերծ է թերություններից: Ամեն մի աշխատանք՝ լինի փոքր, թե մեծ, բացեր ունենում է: Դրանց շտկումը ժամանակի հարց է:

Ինչևիցէ. «Կռունկ»-ը Արցախի ազատագրական պայքարի մի դրվագ է, որին պետք է փայփայել մեր ապագա սերնդի համար: Նրա մասին, անշուշտ, դեռ կգրվի, ամբողջական խոսք կասվի:

Լավն ու բարին բոլորիդ, սիրելի հայրենակիցներ…

Օգտագործված գրականություն

1. ՀՀ ազգային արխիվ, ֆ.4546, ց.1, գ.1. ֆ.1, ց.87, գ.11, ց.84, գ.131, ֆ.207, ց.44, գ.3:
2. ԼՂՀ արխիվային գործի վարչություն, ֆ.1, ց.2, գ.260, 273, ֆ.135, ց.2, գ.186
3. Հեղինակի անձնական արխիվ
4. «Ազգ», Երևան, 1993-2007
5. «Հայոց աշխարհ», Երևան, 1998
6. «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1990-2008
7. «Միացում», Ստեփանակերտ, 1989
8. «Սովետական Ղարաբաղ» (հետագայում փոփոխված անուններով), Ստեփանակերտ, 1988-2008
9. “Известия”, Москва, 1988-1989
10. “Правда”, Москва, 1988-1989
11. Աբրահամյան Հրանտ, Արցախյան գոյամարտ, Երևան, 1991
12. Աբրահամյան Հրանտ, Ճակատագրին ընդառաջ, Երևան, 2001
13. Աբրահամյան Հրանտ, Մարտնչող Արցախը, 1917-2000, գիրք Գ, 1985-2000, Ստեփանակերտ, 2007
14. Աբրահամյան Հրանտ, Մարտ՝ կրակագծի մատույցներում, Երևան, 2008
15. Բաղրյան Վարդգես, Ֆենոմեն, Ստեփանակերտ, 1998
16. Բեգլարյան Հրաչյա, Արցախ-Նամե, գ.3, Ստեփանակերտ, 2006
17. Խոջաբեկյան Վ. Ե., Արցախը փորձության ժամին, Երևան, 2001
18. Խաչատրյան Սերգեյ, Վաստակած պատիվ, Ստեփանակետ, 2002
19. Հասրաթյան Սենոր, Ղարաբաղյան պատերազմ, Երևան, 2001
20. Ղարաբաղյան հարց, Ստեփանակերտ, 1991
21. Պետրոսյան Ռազմիկ, Արցախ. պատերազմ. զինադադար, Երևան, 2001
22. Պատմական նստաշրջան, Ստեփանակերտ, 2008
23. Ուլուբաբյան Բագրատ, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997
24. Арутюнян В.Б., События в Нагорном Карабахе, хроника, часть I, февраль 1988-февраль1990, Ереван, 1990

25. Народное хозяйство Азербайджанской ССР. Юбилейный статистический ежегодник к 70-летию Великого Октября, Баку, 1987
26.Сахаров Андрей, О Ногорном Карабахе, Ереван, 1996
27. Сумгаит... Геноцид... Гласность...?, Ереван, 1996
28. Хроника НКАО, февраль 1988-февраль 1990, Баку, 199
29. Иван Ратцигер: Азербайджан и анти-армянский анти-фашизм http://regnum.ru/news/1229002.html 15.07.2010
30.Հայաստանի ազգային արխիվ. ֆ.207, ց.44, գ.16, թ.36
31.Հայաստանի ազգային արխիվ. ֆ.207, ց.44, գ.19. թ.51

Բովանդակություն

1. Հրանտ Բարսեղի Աբրահամյան (կենս. տվյալներ).....3
2 Նախօրեին.....4
3. Պայքարը նոր շունչ ու թափ է առնում.....9
4. Օդը շիկանում է.....17
5. Նախաձեռնող խումբը.....19
6. 1988. փետրվարի 20.....22
7. «Կռունկի» ծնունդը.....38
8. Ընդհատակում.....50
9. Եզրափակում.....60
10. Օգտագործված աղբյուրներ 61

ՀՐԱՆՏ ԲԱՐՍԵՂԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

«ԿՌՈՒՆԿ»

Խմբագիր՝ Միքայել Հաջյան
Սրբագրիչ՝ Ֆլորա Ստեփանյան
Համակարգչ.
շարվածքը՝ Անի Աբրահամյանի
Համակարգչ.
էջադրումը՝ Լուսինե Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/16:
Ծավալը՝ 4 տպագր. մամուլ: Տառատեսակը՝ Arial Armenian Long:
Տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ.Հակոբյան, 25
Ստեփանակերտ-2013